Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

11

Պաշտօնական

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ.

# ԹԵԹԵՒ ՀՐԵՏԱՁՕՐԻ

## ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

## ՄԱՐՏԿՈՑԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

(ՀԱՅ - ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՑՈՒՑԱԿՈՎ)

ԷՋՄԻԱԾԻՆ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1920 Թ.

Պաշտօնական

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ.

# ԹԵԹԵՒ ՀՐԵՏԱՁՕՐԻ

## ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

## ՄԱՐՏԿՈՑԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ,

(ՀԱՅ — ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՑՈՒՑԱԿՈՎ)

ԷՋՄԻԱԾԻՆ,
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1920 Թ.

26720

92-ԱԳՀ

# ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



1. Մարտկոցի ուսագ ույոյ.
2. Դասակապետ.
3. Վերակայ.
4. Հրանօթի ինթապայ.
5. Արկղավար.
6. Հետախոյզ և կապի խմբի զինուոր.
7. Լծած հրանօթ.
8. Լծած արկղ.
9. Հեռախօսային երկանիւ.

## ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Գլխաւոր Շտաբին կից Թարգմանիչ Յանձնախումբը հրետագօրի և հետևագօրի փարժութեան հրամանների հայերէն թարգմանութիւնը վեց ամիս առաջ ուղարկել էր զօրամասերին ի գործադրութեան, խընդրելով ձեռնհաս զինուորականներին՝ իրենց դիտողութիւններն ուղարկել Յանձնախմբին։ Ստացուած բոլոր դիտողութիւնները նկատի են առնուած և այդ դիտողութիւնների ու այլ կշռադատութիւնների հիման վրայ սոյն կանոնագրքի հրամանների մէջ մտցրած են որոշ փոփոխութիւններ։

Բացի այդ, այս կանոնագրքից մի քանի բաներ, որոնք աւելորդ են նկատուած, փոփոխուած կամ դուրս են գցուած Ռազմական Նախարարի հրամանով։

Զինուորական բառերն ու տերմինները հասկանալի դարձնելու համար, այս կանոնագրքի վերջում զետեղուած է մի փոքրիկ բառարան հայերէնից ռուսերէն, ուր ժողոված են կանոնագրքում գործածուած բառերն ու տերմինները։

Սոյն կանոնագրքի թարգմանութիւնը կատարել է տեղակալ Լևոն Արամեանը. Թարգմանիչ Յանձնախումբը, մասնակցութեամբ թարգմանչի, դոցենտ դոկ. Մ. Աբեղեանի փոխ. գլխապետ Գ. Մելիք-Ցարու-

*թիւնեանի և նախադրութեամբ գնդապետ Աթայեանի ճշտել է բնագրի հետ համեմատելով և ուղղել: Բառա-ցուցակը կազմել է փոխ. գնդապետ Գ. Մելիք Յա-րութիւնեանը:*

**Թարգմանիչ Յովհաննիսեանը.**

*1920 թ. յունիս 1.*
*Երևան.*

# ՑԱՆԿ

## Մարտկոցի վարժութիւն

### ՀԱՏՈՒԱԾ I.

Ընդհանուր կանոններ.


| | | | Եր. |
|---|---|---|---|
| Գլուխ | I. | Մարտկոցի կազմը | 1 |
| » | II. | Մարտկոցի կարգերն ու շարքերը | 3 |


### ՀԱՏՈՒԱԾ II.

Մարտկոցը սարքման կարգի մէջ.


| | | | |
|---|---|---|---|
| » | I. | Անձնական կազմի տեղերը | 9 |
| » | II. | Մարտկոցի դիրքափոխութիւնը | 13 |
| » | III. | Քայլերը | 15 |
| » | IV. | Հաւասարում ու ուղղութիւն | 16 |
| » | V. | Շարժում ու կանգնեցնելը | 17 |
| » | VI. | Միջանցների փոխում ու բացում. լուծքերի տեղափոխութիւն | 19 |
| » | VII. | Շարժման ուղղութեան փոփոխութիւն | 20 |
| » | VIII. | Կազմափոխութիւններ | 26 |


### ՀԱՏՈՒԱԾ III.

Շարժման կարգից մարտական դրքի անցնելը եւ մարտկոցը հրաձգութեան նախապատրաստելը.


| | | | |
|---|---|---|---|
| » | I. | Դիրքի ընտրութիւնը. | 32 |
| » | II. | Դիրք բռնելը | 36 |
| » | III. | Դիրքի սարքաւորումը. | 41 |

## ՀԱՏՈՒԱԾ IV.

### Մարտիկոսը մարտակարգի մէջ.

Հրաձգութիւն.


» I. Անձնական կրակի ձևերը . . 46
» II. Կրակի ղեկավարութիւնը . . 48
» III. Կրակի բացումը և վարելը . . 53


## ՀԱՏՈՒԱԾ V.


» I. Մատակարարումը, կորուստների լրացումը, նիւթեղէն մասի պարագաների փոխարինումը և նորոգութիւնը . 69


## ՀԱՏՈՒԱԾ VI.

### Զօրանոց եւ զօրանոցներ.

Ներքին կեանքը.


» I. Ընդհանուր ցուցմունքներ . . . 78
» II. Ներքին դիմաւորելը . . . —
» III. Հանդիսաւոր գործեր . . . 86
» IV. Մարտիկոսի ներքին կեանքը . . 90


Յաւելուածներ.


Յաւելուած I. Գործնական նշաններ չափման կարգի համար . . . 96
» II. Տարբերի ցուցակի օրինակ . 101
» III. Ազդանշանների ցուցակ . . 102

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | տող Վերևից | տող Ներքևից | տպագրուած է. | պէտք է լինի. |
| --- | --- | --- | --- | --- |
| 3 | 6 | — | արկղաշարքից | արկղ շարքից |
| 11 | 8 | — | մարկոցի | մարտկոցի |
| 27 | 6 | — | գուլից | ուղից |
| 42 | — | 10 | Հետևալ. | Հետևեալ |
| 47 | — | 6 | անկղավարներից | արկղավարներից |
| 72 | 6 | — | աեկղը | արկղը |
| 72 | 8 | — | արկղաւորնկրը | արկղաւորները |
| » | 14 | — | վանդակներր | վանդակները |
| » | — | 11 | դնում է | դնում է |
| » | — | 8 | համարնկրն | համարներն |
| » | — | 1 | փամփուշտներր | փամփուշտները |
| 75 | 3 | | վանդակներրր | վանդակները |
| 75 | 9 | | շարարներից | շարաներից |
| 90 | 4 | | ուսուցու թեան | ուսուցութեան |

ГАВРИИЛ ТЕР-ОГАНЬЯН

# ՄԱՐՏԿՈՑԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

## Հատուած I.

## Ընդհանուր կանոններ

### ԳԼՈՒԽ I.

### *Մարտկոցի կազմը.*

**1.** *Մարտկոցի պատերազմական ժամանակի կազմը հետեւեալն է՝ 4 հրանօթ, 4 արկղ, 2 հեռախօսային երկանիւ և գումակ:*

*Մարտկոցի մասերն են՝*

1. *Մարտական մաս.*
2. *Մարտկոցի օժանդակ.*
3. *I Կարգի գումակ.*
4. *II Կարգի գումակ:*

**2.** *Մարտական մասը կազմուած է 2 դասակից, որոնցից իւրաքանչիւրն ունի 2 հրանօթ և*

մի արկղ, և հետախոյզ ու կապի խմբից [1]:

Մարտկոցի օժանդակը կազմուած է 2 արկղից:

Գումակի կազմը ցոյց է տրուած հաստիքի մէջ:

3. Մարտկոցի զինուորներն ու ձիերը դասաւորւում են հաստիքին կցած յաւելուածի ցուցումի համեմատ:

4. Մարտիկ մասում կրտսեր սպաները հրամանատար են մի—մի դասակի, իսկ աւագ սպան՝ երկու դասակին էլ: Մարտկոցի օժանդակին հրամանատար է դրա համար կարգուած մի արկղավար: I ին կարգի գումակին հրամանատար է դրա համար կարգուած մի ենթասպայ, իսկ II-ին՝ գումակի ենթասպան:

5. Մարտկոցի իւրաքանչիւր դասակ կոչւում է ըստ կարգի՝ 1-ին կամ 2-րդ դասակ. հրանօթները 1-ից մինչև 4-րդ հրանօթը, և ռմբարկղերը՝ 1-ից մինչև 4-րդը, իրենց հրանօթ-

---

1) Հետախոյզ և կապի խումբը կազմուած է հետախոյզներից, սուրհանդակներից, դիտողներից, հեռախօսակ—նշանարարներից և 2 հեռախօսային երկանիւից:

ների համապատասխան։ Կէնտ համար ունեցող ռումբարկղերը կազմում են մարտնիկ մաս, իսկ զոյգ համարով արկղերը՝ կազմում են մարտկոցի օժանդակը։

Մարտկոցն ինչ զիրք էլ որ ունենայ, նոյն իսկ եթէ որևէ հրանօթ կամ արկղաշարքից դուրս ընկնի, այս համարները չեն փոխւում։

6. Շարքի մէջ դասակները, ինչպէս և դասակի մէջ հրանօթները, կարող են դասաւորւել և ոչ իրենց համարների կարգով, սակայն տարբեր դասակների հրանօթներ մի դասակից միւս դասակ տանել չի թոյլատրւում։

## ԳԼՈՒԽ II.

### Մարտկոցի կարգերն ու շարքերը.

7. Մարտկոցի կարգերն են՝

1. Շարժման կարգ.
2. Մարտակարգ։

8. Շարժման կարգի մէջ մարտկոցի շարքերն են՝

1. Երկայնած շարք.
2. Սիւներ։

9. Շարժման կարգի մէջ հրանօթների միջանցները կարող են լինել՝ լայն 24 քայլ եւ նեղ 6 քայլ։ Եթէ անհրաժեշտ լինի, կարելի է ուրիշ միջանցներ ունենալ, որոնց մեծութիւնը որոշւում է քայլերի թւով։

10. Մարտակարգի մէջ միջանցները, իբրև ընդհանուր կանոն, պէտք է լինեն 30 քայլ։ Սակայն կարող են և փոխւել, նայելով դիրքի տեղամասին և տեղանքի բնոյթին։

11. Եթէ հրանօթներն ու արկղերը շարւած են կողք-կողքի (6 քայլ), նշանակւած միջանցները պէտք է հաշւել հրանօթից հրանօթ, ուստի և այդ դրութեան մէջ նեղ միջանցներ չեն գործադրւում։

## Շարժման կարգ.

12. Մարտիկ մասը շարժւում է երկայնած շարքով կամ սիւնով. իւրաքանչիւր հրանօթի լուծքերը շարժւում են շարժման կարգով Հրանօթի Վարժութեան Կանոնադրքի համեմատ Արկղերը հրանօթների վերաբերմամբ նոյն դրութիւն՝ ունեն (ուղիղ ետեւում կամ կողքին, 6 քայլի վրայ)։

**13. Մարտկոցի օժանդակի արկղերը** *դասաւորւում և շարժւում են իրենց զոյգ համար ունեցող հրանօթների հետ, ինչպէս մարտիկ մասի արկղերը։*

*Մարտն սկսելուց առաջ մարտկոցի օժանդակի արկղերը մարտկոցի հրամատարի կարգադրութեամբ զատւում են մարտկոցից։*

**14. 1-ին կարգի գումակը** *գնում է մարտկոցի օժանդակի ետեից կամ առաջից 10 քայլ հեռաւորութեամբ։ Գումակի սայլերի դասաւորութիւնը և իրար ետեից գնալու կարգը որոշում է մարտկոցի հրամանատարը։*

> **Ծանօթութիւն.** *Երբ մարտկոցը գնում է է այլ տեսակի զօրքերի հետ, եթէ նախատեսւում է հակառակորդի հետ ընդհարւելը, ջոկապետը կարգադրում է, որ 1-ին կարգի գումակի մի մասը զատւի և անցնի ընդհանուր սիւնի տուտը։*

**15. 2-րդ կարգի գումակը** *զատւում և առանձին սիւն է կազմում։ Իսկ երբ այս գումակը մարտկոցի հետ է, նրա դասաւորութիւնը և շարժւելու կարգը որոշում է մարտկոցի հրամատարը։*

**16. Երկայնած շարք.** *Հրանօթները շարժւում են նշանակած միջանցներով, մի գծով, ճակատի գծին ուղղահայեցած (նկար 1.)։*

Նկ. 1.



**17. Սիւներ.** *Մարտկոցը կարող է հետեւեալ սիւներն ունենալ.*

1. Հրանօթային.
2. Օժանդակային.

**18. Հրանօթասիւն.** *Հրանօթները շարժւում են իրար ետեւից, 3 քայլ հեռաւորութեամբ, (նկ. 2 և 3)։*

**19. Օժանդասիւն.** *Ամեն մի դասակ գրաւում է հրանօթասիւնի մէջ. դասակները դասաւորւած են իրար կողքի նշանակած միջանցներով։ Եթէ միջանցները հրամանով չեն որոշ-*

Նկ. 2.



Նկ 3.



ւած, դասակները տեղաւորւում են լայն միջանցներով. 24 քայլի վրայ (Նկ. 4)։

Նկ. 4.




## Մարշակարգ.

20. **Մարշիկ մաս.** Մարտակոցի հրամանօթներից իւրաքանչիւրը Հրամանօթի Վարժութեան կանոնագրքով հրահանգուած մարտակարգով դասաւորւում են իրար կողքի, նշանակւած միջանցներով։ Հետախոյզ երկանիները դասաւորւում են մարտակոցի հրամանատարի ցուցմամբ։

21. **Մարշկոցի օժանդակը** տեղաւորւում է մարտակոցի հրամանատարի ցուցմամբ։

Արկղերի սարքերը հագցրած են լինում քարշակներին։

22. 1-ին կարգի զումակը դասաւորւում է

մարտկոցի հրամատարի ցուցումով։

**23**. 2-րդ կարգի դումակը դասաւորւում է մարտի հրամանի համաձայն։

## Հատուած II.

## Մարտկոցը շարժման կարգի մէջ.

## ԳԼՈՒԽ I.

### Անձնական կազմի տեղերը.

### Ընդհանուր ցուցումներ.

**24**. Մարտկոցի հրամատարը գտնւում է այնտեղ, որտեղից յարմար է հրաման տալ մարտկոցին։

Աւագ սպան միշտ գտնւում է մարտկոցի հրամատարի կողմի վրայ։

**25**. Դասակների պետերը և մարտկոցի օժանդակի տասնորդը (երբ օժանդակը բաժնւում է մարտից մասից) ժամանակաւորապէս կարող են թողնել իրենց տեղերը, որպէսզի աւելի յարմար կերպով հրաման տան իրենց մասերին։

26. Դարձերից յետոյ բոլոր պաշտօնատար-ները մնում են մարտկոցի այն կողմի վրայ, որտեղ կնկնեն դարձը կատարելուց յետոյ, իրենց մասերի վերաբերմամբ պահելով ցոյց տրւած տարածութիւնը։

## Երկայնած շարքի մէջ.

27. **Աւագ սպան** կանգնում է միջանցի կենտրոնի դիմաց դասակների միջև 4 քայլ առաջ կամ ետ (այն կողմի վրայ, որտեղ է մարտկոցի հրամատարը)։ **Դասակների պետերը՝** կանգնած են իրենց դասակների կենտրոնի դիմաց, 4 քայլ առաջ կամ ետ, այն կողմի վրայ, որտեղ է մարտկոցի հրամատարը։

28. **Վերակաց՝** մարտկոցի կենտրոնի դիմաց, ռումբարկղերից 6 քայլ հեռաւորութեամբ։ Եթէ մարտկոցի պահեստը բաժանւում է, վերակացն մնում է մարտկոցի մարտիկ մասի ետևը, արկղերից 6 քայլ հեռու։

29. Հրանօթի ենթասպաները և առաջաւոր լուծքերի (1-ին և 4-րդ արկղերի) հեծեալ արկղավարները՝ հորիկների առջև, իսկ ետևի լուծքերինը՝ հորիկների ձիավարների կողքին։ Արկ-

դերի հետեւակ առաջնորդները (2-րդ և 3-րդ արկղերի) նստում են արկղերի քարշակների վրայ։

**30.** **Փողհարը՝** մարտկոցի հրամատարի ետևը, 2 քայլ ետ և 2 քայլ ձախ, կամ համաձայն մարտկոցի հրամատարի ցուցումի։

**31.** **Հետախոյզ եւ կապի խմբի հեծեալ** պաշտօնատարները՝ մարտկոցի աջ թևում, երկու տողով, ձիի հրանօթից 6 քայլ հեռու, առաջին տողը հորիկների գծի վրայ, կամ թէ մարտկոցի հրամատարի ցուցումի համաձայն։

Հեռախօսի երկանիւները՝ հետախոյզ և կապի խմբի ետևը, 3 քայլ հեռու իրար կողքի, 3 քայլ միջանցով, կամ թէ մարտկոցի հրամատարի ցուցումի համաձայն։

**Ծանօթութիւն.** Հետեակ նշանարար—հեռախօսակները տեղաւորւած են՝ 2 հոգի (երկուսը) հեռախօսի երկանիւների վրայ, 9 հոգի ռմբարկղերի եռքերի և քարշակների վրայ։

**32.** **Մարտկոցի օժանդակի առաջնորդը՝** 4-րդ ռումբարկղի մօտ, հորիկի գծի վրայ։

## Սիւների մէջ.

**33.** *Հրանօթասիւնի մէջ աւագ սպան կանգ-նում է առաջաւոր յուծքի ենթասպայի կողքին, մարտկոցի հրամանատարի կամ հաւասարման կող-մի վրայ.* Դասակների պետերը՝ *իրենց դասակ-ների կենտրոնի դիմաց, 4 քայլ հեռու և այն կողմից, որտեղ կլինեն նրանք սիւն կազմելիս։ Եթէ մարտկոցի հրամանատարը գտնւում է աջ կամ ձախ կողմի վրայ, այն ժամանակ դասակ-ների պետերն ևս կանգնում են հրամանատարի գտնւած կողմի վրայ։ Օժանդասիւնի մէջ՝ աւագ սպան միջանցի կենտրոնի դիմաց դասակների միջև, 4 քայլ առաջ կամ ետ (մարտկոցի հրա-մանատարի կողմի վրայ։ Դասակների պետերը՝ իրենց դասակներից 4 քայլ առաջ։*

**34.** Վերակացն, հրանօթի ենթասպան, արկ-ղավարները եւ՝ փողհարը՝ *ինչպէս երկայնած շարքի մէջ.*

**35.** Հետախոյզ եւ կապի խմբի հեծեալ զինուորները եւ հեռախօսի երկանիւները՝ հրա-նօթասիւնի մէջ *կանգնում են մարտկոցի առ-ջևը կամ մարտկոցի հրամանատարի ցուցման հա-*

*մաձայն՝ առջևում խմբի դիմուրները, աջից 3-ական հոգի, նրանց ետևում հեռախօսի երկանիւները մէկը մէկու ետևից 3 քայլ հեռաւորութեամբ վերջին երկանիւի և առաջաւոր ենթասպայի միջև հեռաւորութիւնը 6 քայլ է. իսկ* օժանդասիւնի մէջ՝ *ինչպէս երկայնած շարքի մէջ։*

## ԳԼՈՒԽ II.

### Մարտկոցի ղեկավարութիւնը.

**36** *Մարտկոցի հրամանատարը մարտկոցը ղեկավարում է հրամանների և պատուէրների միջոցով։ Հրամանները տրւում են՝*

1. *Պայմանական նշաններով.*
2. *Ձայնով։*

Ծանօթութիւն. *Մարտկոցի հրամանատարին վերապահւում է թուրը մերկացրած կամ պատեանի մէջ ունենալ։ Վերջին դէպքում պետին հանդիպելիս թուրը չպէտք է հանել։*

**37.** *Այն բոլոր շարժումները և կազմափոխութիւնները, որոնց համար պայմանական նշաններ են ցոյց տրւած (յաւելւած I), կատար-*

ւում են պայմանական նշաններով։ Մարտկոցի հրամատարը կարող է պայմանական նշանների հետ միասին և ձայնով հրամաններ տալ։

38. Դասակների պետերն և մարտկոցի օժանդակի առաջնորդները կրկնում են մարտկոցի հրամատարի տված նշանները։ Մարտկոցի հրամատարի նախապատրաստական և կատարողական նշանների մէջ եղած ժամանակամիջոցներին, եթէ պէտք է, իրենց մասերին նրանք նշան են տալիս, աւելացնելով դրան դժուարին դէպքում նաև ձայնով հրաման։

39. Եթէ մարտկոցի հրամատարի պայմանական նշանների հետ միասին և ձայնով հրամաններ են տրւում, այն ժամանակ դասակի պետերը և մարտկոցի օժանդակի առաջնորդները, վերևի ասածը կատարելով՝ անհրաժեշտ դէպքում ձայնով կրկնում են միայն նրա տւած նշանները։

40. Զօրասիւների մէջ դասակների պետերը, հրանօթի ենթասպաները և արկղավարները ամեն միջոց ձեռք են առնում, որ հրամաններն ու պատուէրները հաղորդւեն ամբողջ սիւնին։ Երբ հրամաններն ու պատուէրները հասնում են ում

որ վերաբերում են. նրանից դէնն այլեւս չեն հաղորդւում։

**41.** Այն շարժումներն ու կազմափոխութիւնները, որոնց համար պայմանական նշաններ չեն հրահանգւած, կատարւում են մարտկոցի հրամատարի ձայնով տւած հրամաններով և պատւէրներով։

Դասակների հրամատարները և մարտկոցի օժանդակի առաջնորդները այս դէպքերում ձայնով կրկնում են մարտկոցի հրամատարի բոլոր հրամանները։

## ԳԼՈՒԽ III.

### Քէլքեր.

**42.** Թեթև հրետանու մէջ գործածելի քէլքերը ցոյց են տրւած Հրանօթի Վարժութեան կանոնագրքի մէջ։

**43.** Մարտկոցի հրամատարի այն հրամանը, որով որոշւում է քէլքը, վերաբերում է միայն հաւասարման կամ ուղղութեան հրանօթին, իսկ միւսները քէլքը փոխում են նայելով իրենց շարւածքի յատկութեան։

## ԳԼՈՒԽ IV.

### Հաւասարումն եւ ուղղութիւն.

44. *Երկայնած շարքի և սիւների մէջ մարտկոցը միշտ հաւասարւում է դէպի աջ, եթէ հարկաւոր է նշանակել այլ հաւասարումն, պէտք հրաման տալ՝*

*ՀԱՒԱՍԱՐՈՒՄՆ ՁԱԽ (դէպի 0 հրանօթը).*

45. *Տեղում դասաւորած ժամանակ հրանօթները պէտք ուղղահայեաց լինին ճակատի գծին, ունենալով ցոյց տուած միջանցները և հեռակայութիւնները, իսկ ետև կանգնածները նաև՝ ուղիղ ետևը։*

46. *Մարտկոցի շարժման ժամանակ նշանակւում են՝* շարժման ուղղութիւնը եւ քայլը։

47. *Հաւասարման հրանօթը շարժւում է ցոյց տուած ուղղութեամբ և նշանակուած քայլքով։ Մնացածները, նայած շարժման տարբեր պայմաններին, պահում են միջանցներին ու հեռակայութիւնները և հաւասարւում են հաւասարման հրանօթի և ծածրակի համեմատ։*

48. *Մարտկոցի հրամանատարի՝*

ԻՆՁ ՀԵՏԵՒԻՐ.

Հրամանով, հաւասարման հրանօթը գնում է մարտկոցի հրամատարի ետեւից, 24 քայլ հեռաւորութեամբ, հետեւելով նորա քայլերին։

1006
26760

ՅԱՌԱՋ կամ (ուղղութիւնը) ԴԷՊԻ ԱՅՍ ԻՆՁ ԱՌԱՐԿԱՆ.

Հրամանով, ուղղութեան հրանօթը այլեւս չի գնում մարտկոցի հրամատարի ետեւից, այլ բռնում է ցոյց տուած ուղղութիւնը։

49. Դարձերի ժամանակ միշտ պիտի հաւասարուել դէպի առջեւ գնացող լուծքի կողմը։

50. Շրջումների ժամանակ պիտի հաւասարուել դէպի շրջւող թեւը, իսկ միջանցը պահել ներքին թեւի կողմից։

51. Քարշակների իրենց հեռացման եւ մերձեցման ժամանակ միշտ հաւասարւում են դէպի աջ։

52. Դասակների պետերը պիտի հսկեն, որ հրանօթները պահեն քայլը, ուղղութիւնը, միջանցները, հեռաւորութիւնը եւ հաւասարումը։

## ԳԼՈՒԽ V.

### Շարժումն ու կանգնեցնելը.

53. Յառաջ շարժելու համար, պիտի հրա-

Гос. Публ. Библиотека
ССРА
им. А. Мясникяна

ման տալ՝

1. (Ուղղութիւնը) ԴԷՊԻ ԱՅՍ ԻՆՁ ԱՌԱՐԿԱՆ ՔԷԼՔ.

կամ ԻՆ՛Ձ ՀԵՏԵՒԻՐ.

2. ՄԱ՛ՐՇ.

Ծանօթութիւն. Եթէ հրամանով չի նշանակուած շարժման ուղղութիւնը, ապա հաւասարման հրանօթը շարժւում է ուղիղ դէպի յառաջ։

54. Դասակները (հրանօթները արկղերը), որևէ խոչընդոտ յաղթահարելու կամ կողքով անցնելու համար, իրենց պետերի (հրանօթի ենթասպաների, արկղավարների) հրամանով կարող են ժամանակաւորապէս փոխել քէլքերը, հեռաւորութիւնները, միջանցները և շարքի ձևերը։

55. Մարտկոցը կանգնեցնելու համար, պիտի հրաման տալ՝

1. ՄԱՐՏԿՈ՛Ց.

2. ԿԱ՛ՆԳ—ԱՌ.

56. Կանգնեցնելուց յետոյ մարտկոցը հաւասարեցնելու համար, պիտի հրաման տալ՝

ՀԱՒՍԱ՛Ր։

Դասակների պետերը և հրանօթի ենթաս-

պաները (արկղափարները) 6 քայլ առաջ են գալիս, կանգ առնում և հաւասարւում, ապա լուծքերը հաւասարելով առաջ են անցնում մինչև հրամնօթի ենթասպաները (արկղափարները)։

## ԳԼՈՒԽ VI.

### Միջանցների փակումն ու բացումը. Լուծքերի տեղափոխութիւնը.

**57.** *Միջանցների փակումն ու բացումը կատարւում է շարժման ժամանակ, կամ շարժումն սկսելու հետ միասին։*

**58.** *Միջանցները փակելու (բանալու) համար պիտի հրաման տալ՝*

1. *ՆԵՂ (լայն) ՄԻՋԱՆՑ.*

*կամ 00 ՔԱՅԼ ՄԻՋԱՆՑ.*

2. *ՄԱՐՇ։*

*Հաւասարման հրամնօթը դնում է հրամայւած քէլքով, իսկ միւսները բռնում են նշանակւած միջանցները նրանից սկսած, կրկնակի արագացնելով քէլքը։*

**59.** *Լուծքերը տեղափոխելու համար պիտի հրաման տալ՝*

1. ԱՐԿՂԵՐԸ (Հրանօթները) ՁԱԽ (ձախ) (ՅԱՌԱՋ).

2. ՄԱՐՇ.

Կատարւում է, համաձայն Հրանօթի Վարժութեան կանոնագրքի, որից յետոյ սիւների մէջ բոլոր հրանօթները, առանց յատուկ հրամանի սպասելու, իրենց միջի հեռաւորութիւնը նեղացնում են մինչև 3 քայլ։

60. Եթէ իւրաքանչիւր հրանօթների լուծքերը 6 քայլից աւելի միջանց ունին և հարկաւոր է միջանցները փակել, պէտք է հրամանտալ՝

1. ԱՐԿՂԵՐԸ ԴԷՊԻ ՀՐԱՆՕԹ (հրանօթները դէպի արկղ).

2. ՄԱՐՇ.

Երկրորդ հրամանով իւրաքանչիւր հրանօթի մասնանշած լուծքը ամենակարճ ճանապարհով մօտենում է միւսին 6 քայլի վրայ։

## ԳԼՈՒԽ VII.

Նաւժման ուղղութեան փոփոխութիւն.

61. Մարտկոցի շարժման ուղղութիւնը կա-

րող է փոխել՝

ա. Ջոկ-ջոկ հրանօթների և ամբողջ մարտկոցի դարձով,

բ. շրջումով,

գ. հրանօթներից մէկի համեմատ։

62. Ջոկ-ջոկ հրանօթներով դարձ կատարելու համար, պիտի հրաման տալ՝

1. ԿԷՍ-ԱՋ (կէս ձախ) ԴԱՐՁ.

կամ ԱՋ (ձախ) ԴԱՐՁ.

կամ ՇՈՒՌ ԳԱԼ ԱՋ (ձախ).

2. ՄԱՐՇ։

Կատարւում է համաձայն Հրանօթի Վարժութեան Կանոնագրքի։

Եթէ հրանօթն ու արկղն իրար ետևի են, շուռ գալը կատարւում է նրանցից իւրաքանչիւրը ջոկ-ջոկ, իսկ եթէ իրար կողքի են՝ 6 քայլ միմեանցից հեռու, այդ դէպքում հրանօթն ու արկղը միասին են կատարում (նկար 5 և 6)։

Ծանօթութիւն. Եթէ միջանցները ու հեռաւորութիւնները թոյլ չեն տալիս, որ բոլոր հրանօթները միաժամանակ կատարեն դարձերը, այն ժամանակ դարձերը կատարւում են հետզհետէ, երբ հրանօթների համար տեղ է բացւում։

Նկ. 5.



Մարտկոցի դարձը ջոկ–ջոկ հրանոթներով.. եղ–դարձը ձախ.

Նկ. 6.



Մարտկոցի դարձը ջոկ-ջոկ հրանոթներով. եղ դարձն աջ.

**63.** *Մարտկոցով դարձեր կատարելու համար, պիտի հրաման տալ՝*

1. ԴԱՐՁ ԴԷՊԻ ԱՋ (*ձախ*).
2. ՄԱՐՇ.

*Երկրորդ հրամանով այն թևի հրանոթը, որի կողմը պիտի դառնայ մարտկոցը, դարձը կատարում է տեղում քէլքը փոխելու, իսկ միւսները կրկնակի արագացնելով քէլքը, ամենակարճ ճանապարհով դուրս են գալիս որոշուած՝ միջանցի վրայ՝ սկսած դարձի ներսի կողմը գտնուած հրանոթից և հաւասարուելով նրա համեմատ, վերականգնում են նախկին քէլքը։ Իւրաքանչիւր հրանոթի ետևի լուծքերը գնում են առաջաւորների ետևից (նկար 7)։*

Նկ. 7.



**64.** *Շրջումն կատարելու համար պիտի հրաման տալ՝*

1. ԱՋ (*ձախ*) ԹԵՒՆ ՅԱՌԱՋ
2. ՄԱՐՇ.
3. ՅԱՌԱՋ.

*կամ* ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԱՅՍ ԻՆՉ ԱՌԱՐԿԱՆ.

Երկրորդ հրամանով, այն թևի հրանօթը, դէպի որը կատարւում է շրջումը, շրջումը կատարում է առանց քէլեր փոխելու, իսկ միւս հրանօթները շրջւում են դէպի հրամայւած կողմը աղեղնաձև, պահպանելով միջանցները սկսած ներքին թևից։ Շրջւող հրանօթը կրկնակի արագացնում է քէլը, իսկ միւսները համաչափե-ցում են շարժման արագութիւնը, հաւասար-ւելով դէպի շրջւող թևը։ Նաև լուծքերը գնում են առաջաւորների ետևից (Նկար 8)։



(Նկ. 8).

Երրորդ հրամանով վերականգնւում է քէլը։ Շրջումները կատարւում են ամէն չափի անկիւններով։

65 Շարժման ուղղութիւնը հրանօթներից

մէկի համեմատ փոխելու համար, պիտի հրաման տալ՝

1. ՕՕ ՀՐԱՆՕԹ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԱՅՍ ԻՆՉ ԱՌԱՐԿԱՆ.

2. ՄԱՐՇ։

Երկրորդ հրամանով, ուղղութեան հրանօթը տանող քէլեր փոխելու, գնում է մատնանշած ուղղութեամբ, միւսներից առջեւում գտնուողները քէլեր դանդաղեցնում են, իսկ ետեւում գտնուողները արագացնում են և բոլորը նորանից սկսած բռնում են հարկաւոր միջանցները։ Հրանօթները հասնելով ճակատի գծին, վերադարձնում են քէլեր։

Այս ձեւով շարժման ուղղութիւնը փոխւում է նոյն ձեւով, երբ մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝

1. ԻՆՉ ՀԵՏԵՒԻՐ.

2. ՄԱՐՇ։

Այս դէպքում ուղղութիւնը 90°-ից էլ աւելի մեծ անկիւնով կարող է փոխել։

## ԳԼՈՒԽ VIII.

### Կազմափոխութիւններ.
### Ընդհանուր գաղափարներ.

67. Մարտկոցը կարող է կազմափոխուել՝ երկայնած շարքից՝ սիւնների, մի սիւնից՝ միւսի և սիւներից՝ երկայնած շարքի։

68. Կազմափոխութիւնները կատարւում են շարժման ժամանակ, կամ շարժումն սկսելու հետ միասին։

69. Կազմափոխութիւնները կատարւում են միևնոյն ձևով թէ այն դէպքում, երբ արկղերը հրանօթների ետևին են, և թէ այն դէպքում երբ նրանք առջևումն են կամ կողքին (6 քայլ)։

70. Կազմափոխութիւնների ժամանակ իւրաքանչիւր հրանօթի լուծերի փոխադարձ դրութիւնը պահպանւում է միշտ, եթէ յատուկ հրաման չի լինում այդ մասին։

71. Քայլը նշանակւում է հրամանով, երբ կազմափոխութիւնները կատարւում են շարժումն սկսելու հետ միասին. իսկ շարժման ժամանակ, միայն այն դէպքում, երբ քայլը փոխւում է։

## Սիւներ կազմելը·

72. Ճակատման ուղղութեամբ հրանօթային կազմերու համար պէտք հրաման տալ՝

1. ՀՐԱՆՕԹ ԱՌ ՀՐԱՆՕԹ ԱՋԻՑ (ձախից).
2. ՄԱՐՇ։

Աջ (ձախ) հրանօթը գնում է ուղիղ հրամայուած քայլով, միւսները անմիջապէս ձախադարձով հետևում են առաջնորդին հետզհետէ, երբ տեղ է բացւում։

73. Դէպի որևէ թևի կողմը հրանօթային կազմերու համար. պէտք հրաման տալ՝

1. ԱՋ (ձախ) ԴԱՐՁ.
2. ՀՐԱՆՕԹՆԵՐԸ (սիւնակը) ՅԱՌԱՋ.
3. ՄԱՐՇ։

Աջ կողմի (ձախ կողմի) հրանօթը դարձը կատարում է հրամայուած քայլով և գնում նոր ուղղութեամբ. միւսները դառնում են և հետևում նրան հետզհետէ, երբ տեղ է բացւում։

Ծանօթութիւն. Եթէ հրանօթները և արկղները խառը կանգնած են (6 քայլ), երկրորդ հրամանը չի տրւում։

74. Օժանդակային կազմերու համար պէտք հրաման տալ՝

1. ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԵԼ ԱՋԻՑ (ձախից)։

2. ՄԱՐՇ.

Իւրաքանչիւր դասակ իր պետի հրամանով շարժւում է հրանոթ առ հրանոթ աջից (ձախից), առաջ աջ (ձախ) դասակը, չփոխելով քայլը, շարունակում է շարժել նախկին ուղղութեամբ, միւսը իր պետի ԻՆՁ ՀԵՏԵՒԻՐ հրամանով, կրկնակի արագացնելով քայլը, դուրս է գալիս, լայն միջոցից կազմում և հաւասարելով՝ վերականգնում է քայլը։

Ծանօթութիւն. Եթէ օժանդակութիւն պետք կազմել ոչ լայն միջոցներով, ապա հրամանից առաջ պետք աւելացնել՝ ոչ լայն միջոցից հրամանը։

Սիւների կազմափոխութիւնը.

75. Հրանոթախմբային օժանդակութիւնը կազմափոխելու համար պէտք է հրաման տալ՝

1. ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԵԼ ԴԷՊԻ ՁԱԽ (աջ).

2. ՄԱՐՇ։

Առաջաւոր դասակը գնում է ուղղակի հրամայուած քայլով, միւսն իր պետի ԻՆՁ ՀԵՏԵՒԻՐ

հրամանով, կրկնակի արագացնում է քայլքը և ամենակարճ ճանապարհով դուրս գալիս ճակատի գծի վրա, լայն միջանցով, սկսած առաջաւոր դասակից և հաւասարուելով, վերականգնում է քայլքը։

76. Օժանդակութիւնը հրանոթութիւնի կազմափոխելու համար, պիտի հրաման տալ՝

1. ՀՐԱՆՈԹ ԱՌ ՀՐԱՆՈԹ ԱՋԻՑ (ձախից)·
2. ՄԱՐՇ։

Աջ (ձախ) դասակը գնում է ուղղակի, մինչև իր պետի ԻՆՉ ՀԵՏԵՒԻՐ հրամանով, ամենակարճ ճանապարհով ձգւում-գնում է առաջնորդի յետևից, հենց որ տեղ է բացւում։

Երկայնած շարք կազմելը·

77. Հրանոթութիւնից շարժման ուղղութեամբ երկայնած շարք կազմելու համար, պէտք է հրաման տալ՝

1. ԴԷՊԻ ՁԱԽ (աջ) ՇԱՐԻՐ.
2. ՄԱՐՇ։

Առաջաւոր հրանոթը հրամայուած քայլքով գնում է ուղղակի, միւսները կրկնակի արա-

պայրած քելքով ամենակարճ ճանապարհով դուրս են գալիս ճակատի գծի վրայ լայն միջանցներով, սկսած՝ առաջաւոր հրանոթից և հաւասարւելով վերականգնում են քելքը (Նկար 9)։

Ծանօթութիւն. Եթէ մարտկոցը՝ պէտք է շարժել ոչ լայն միջանցներով, մարշ հրամանից առաջ պէտք է աւելացնել 00 քայլ միջանց հրամանը։

(Նկ. 9).




78. Հրանոթատարներից դէպի թևի կողմը երկայնած շարք կազմելու համար, պէտք է հրաման տալ՝

1. Ա՛Ջ (ձախ).
2. ՀՐԱՆՕԹՆԵՐԸ (արկղերը) ՅԱՌԱՋ.
3. ՄԱՐՇ։

Հրանոթները կատարում են դարձը և իսկոյն առանց յատուկ հրամանի փակւում են դէպի հաւասարութեան

հրանօթի կողմը՝ կազմելով լայն միջանց (նկար 10.)։

Ծանօթութիւն. *Երբ հրանօթներն ու արկղերն իրար կողքի են (6 քայլ), երկրորդ հրամանը չի տրւում։*

**79.** *Օժանդասիւնից երկայնած շարք կազմելու համար, պիտի հրաման տալ՝*

Նկ. 10.




*Հրանօթասիւնից դէպի աջ երկայնած շարք կազմելը։*

1. ԴԷՊԻ ՁԱԽ (աջ) ՇԱՐԺԻՐ.
2. ՄԱՐՇ։

Բոլոր դասակները երկայնած շարք են կազմում, կազմելով լայն միջանցներ, սկսած հաւասարութեան հրանոթից։

## Հատուած III

Շարժման կարգից մարտակարգին անցնելը եւ մարտկոցը հրաձգութեան նախապատրաստելը[1].

## ԳԼՈՒԽ I.

### Դիրքի ընտրութիւնը.

80. Այն դիրքը, որի վրայ մարտկոցը մարտակարգով պիտի դասաւորուի, ընտրում է մարտկոցի հրամանատարը։

Ընտրած դիրքը պիտի հնարաւորութիւն տայ մարտկոցին տուած մարտական խնդիրները լու-

1) III—V Հատուածներում նկատի է առնուած առանձին գործող մարտկոց։

ծելու և տեխնիքական անհրաժեշտ պայմանների բավարարելու։

81. Մարտկոցի հրամատարը գիրքն ընտրում է, նախապէս հետախուզելով իր ընտրած կամ իրեն ցոյց տուած շրջանի տեղագրութիւնը։ Մարտկոցի հրամատարը հետախուզութիւնը կատարում է անձամբ, ինչպէս և հետախոյզ սպաների ու զինուորների միջոցով։

82. Ընդհանուր կանոն է, որ մարտկոցի հրամատարին, երբ նա հետախուզութեան է ելնում, հետեւում են իր նշանակած մի սպայ, փողհարը, հեռախօսի 2 երկանիւ և հետախոյզ ու կապի խմբի հեծեալ զինուորները։ Հետեւակ նշանարար—հեռախօսակները դէպի գիրքն ուղարկւում են մարտկոցի վերջին կայանից, նրա այնտեղից ելնելուց առաջ։

Մարտկոցի հրամատարը մեկնելու ժամանակ աւագ սպային տալիս է անհրաժեշտ ցուցումներ հետագայ շարժման մասին, որից յետոյ աւագ սպան իր ձեռքն է առնում մարտկոցի հրամանատարութիւնը և կապ է հաստատում հրամատարի հետ։

83. Հետախուզութեան և գիրք ընտրելու

աշխատանքները պիտի կատարուին թշնամուց ծածուկ և ժամանակը պիտի հաշուել այնպէս, որ մարտկոցը իր ժամանակին կարողանայ կրակ բանայ։

Եթէ անհրաժեշտ է, անյապաղ կրակ բանալ, յարմար կարող է համարուել ամէն մի դիրք, եթէ այնտեղից հնարաւոր է լուծել տուած խնդիրը։

Եթէ դիրքը պիտի բանուի գիշերով, ընդհանուր կանոն է, որ հետախուզութիւնը և դիրքի ընտրութիւնը կատարուի դեռ մութը չընկած։

**84.** Հետախուզութեան հետեւանքների հիման վրայ մարտկոցի հրամանատարը ընտրում է՝

1. Հրամանատարի դիտակէտը.
2. Հրանօթների տեղը.
3. Քարշակների տեղը.
4. Մարտկոցի օժանդակի տեղը։

**85.** **Հրամանատարի դիտակէտը** պէտք է հնարաւորութիւն տայ՝

1. Դիտելու մարտկոցի համար նշանակուած նպատակներին ուղղած արձակումների հետեւանքները։

2. Ղեկավարելու մարտկոցի կրակը։

Բացի այդ, եթէ հնարաւոր է, նա պիտի բաւարարէ հետեւեալ պայմաններին.

ա. որքան կարելի է ընդարձակ տեսածիր ունենայ.

բ. ծածկուած լինի թշնամու աչքից ու կրակից.

գ. որքան կարելի է, մարտկոցին մօտ գտնուի.

դ. մարտկոցի հրամանատարին և նրա հետ պաշտօնատարներին լաւ կերպով պատսպարելու յարմարութիւն տայ, նոյնպէս և բոլոր անհրաժեշտ պիտոյքներն ու յարմարանքները տեղաւորելու յարմարութիւն տայ.

ե. հնարաւորութիւն տայ, հրանօթների պետի և հարևան զօրամասերի հետ յարմար ու վստահելի կապ հաստատելու։

Դիտակէտերը չպիտի լինին այնպիսի տեղերում, որ թշնամին կարողանայ ճիշտ նշմարել, թէ նրանք այնտեղ են, և ռմբակոծի։

Ծանօթութիւն. Երբ լաւագոյն դիտակէտ ծառայում են բարձունքները, ապա տեղային բարձր առարկաները, իսկ եթէ այդ-

*պիտիներ չկան, գործ է ածում գիտանոցը։*

**86. Հրանօթների տեղը** *նայած թէ ինչ չափով է ծածկուած նա թշնամու աչքից, լինում է* ծածուկ, կիսածածուկ *և* բաց։

*Մարտկոցի հրամանատարը հրանօթների տեղն ընտրելիս պիտի ի նկատի ունենայ հետևեալ տեխնիքական պահանջները։*

*1. Որքան կարելի է ուղղաձիգ և հորիզոնական ձևով աւելի մեծ տարածութիւն ռմբակոծել։*

*2. Ճակատով և խորութեամբ բաւականաչափ տարածութիւն.*

*3. Հարթ մակերևոյթ և պինդ գետին.*

*4. Հրանօթների գծով կապ և հաղորդակցութիւն ունենալու արգելքների բացակայութիւն.*

*5. Յարմարաւոր մատոյցք և ելք.*

*6. Թշնամու աչքից ծածկող քողարկներ.*

*7. Թիկունքի կողմում այնպիսի խորք, որ թշնամուն արգելի դիտողութիւններ անել։*

*8. Մօտակայքում սուր կերպով աչքի ընկնող և պարզ երևացող տեղական առարկաների բացակայութիւն.*

*9. Այնպիսի առարկաների բացակայութիւն,*

զորանք կարող են ուժեղացնել թշնամու դնդիք-ների գործողութիւնը։

**87.** Հրանոթների տեղը նշանակելու համար, պէտք է ցոյց տալ թևման հրանոթների կամ հրանոթներից մեկի դրութիւնը։ Հրանոթների միջանցների մեծութիւնը յայտնւում է աւագ սպային, մարտկոցին հաղորդելու համար։

Անհարթ և դար ու փոս տեղանքում, ինչպէս նաև գիշերով դիրք բռնելու դէպքում, կարող են տեղեր նշանակել իւրաքանչիւր հրանոթի համար։

**88.** Բարշակների և մարտկոցի օժանդակի տեղերը պէտք է՝

1. Ծածկւած լինեն թշնամու աչքից և, եթէ հնարաւոր է նաև կրակից։

2. Յարմար և պատսպարւած հաղորդակցութիւն ունենան հրանոթների հետ։

3. Չգտնւեն հրանոթների տեղի ուղիղ ետևը։

**89.** Իբրև ընդհանուր կանոն, մարտկոցի օժանդակը տեղաւորւում է բարշակներից անջատ։

Եթէ մարտկոցի հրամանատարը բարշակների և

մարտկոցի օժանդակի համար տեղերը ճիշտ չի ցոյց տուել, այլ միայն մօտաւորապէս՝ (ցոյց է տուած շրջանը) այն ժամանակ քարշակների և օժանդակի հրամանատարներն իրենք են ընտրում այդ տեղերը։

Քարշակը և մարտկոցի օժանդակը հրանօթներից հեռացնելը կախուած է տեղանքից։

## ԳԼՈՒԽ II.

## Դիրք բռնելը.

**90.** *Ընդհանուր կանոն է, որ մարտկոցը նախքան դիրք դուրս գալը՝ կանգ է առնում, որպէսզի անձնական կազմին բացատրուի առաջիկայ գործողութիւնների նպատակը և դիրք դուրս գալու եղանակը և կատարուեն ստացուած կարգադրութիւնները։*

**91.** *Մարտկոցի հրամանատարը, մարտկոցի դիրք դուրս գալու համար, առաջ սպային պատուէր է ուղարկում, որի մէջ ցոյց է տուած լինում այն ամէնը, ինչ որ հարկաւոր է համարում հաղորդել դիրք դուրս գալը կատարելու և այնտեղ տեղաւորուելու համար. (շարքը, քէլքը,*

*միջանցները և այլն)։ Պատուէր տանողը միաժամանակ մարդկային ուղեցոյցի դերն է կատարում և ցոյց է տալիս նրան դիրք դուրս գալու թշնամուց ծածկուած ճանապարհը։*

**92.** *Հրանոթների և քարշակների համար տեղերի որոշակի նշանակումը, ինչպէս և դիրք դուրս գալու ճանապարհի խնամքով ընտրութիւնը, հեշտացնում է դիրքեր կանոնաւոր և արագ կերպով բռնելը։ Այս նպատակով առանձնապէս՝ գար ու փոս տեղերում, նոյնպէս և գիշերով դիրք բռնելիս, կարող է կարիք զգացուել դուրս կանչելու դասակապետերին, հրանոթի ենթասպաներին և քարշակների պետերին, որպէսզի նրանք ծանօթանան ի նկատի առած տեղերին և ընտրեն դէպի այդ տեղերը տանող յարմարագոյն ճանապարհները։*

**93.** *Դիրք դուրս գալու հիմնական պահանջներն են՝* **թաքունութիւն** *ու հնար եղածին չափ* **արագութիւն**։

*Թաքունութիւնը յաջողւում է գլխաւորապէս ճանապարհի խնամքով ընտրութեամբ։*

*Երբեմն օգտակար է որոշ տեղամասեր անցնել ձիավարներին իջեցնելով, ինչպէս և հրա-*

նօթների համար որոշուած տեղերից որոշ հեռաւորութեան վրայ, հրանօթները հանել քարշակներից և այդ առաջ մղել ձեռքերով։

Եթէ չի կարելի ցերեկով ծածուկ դիրք դուրս գալ և հանգամանքները թոյլատրում են, պէտք է գիշերը դիրք բռնել։

Բայց դիրք բռնելիս առաջնակարգ նշանակութիւն ունի դիրք դուրս գալու արագութիւնը։

94. Ընդհանուր կանոն է, որ դիրք բռնէ հրանօթասիւնով կամ երկայնած շարքով. երկու դէպքում էլ արկղերը կողքից են լինում (6 քայլ)

95. Շարժման կարգից անմիջապէս մարտակարգին անցնելու համար, կամ ընդհակառակը, սահմանուած են հեռացում և մերձեցումը, որը կատարւում են Հրանօթի Վարժութեան Կանոնագրքի մէջ յիշուած կարգով և հրամաններով։

96. Դիրքը դէպի առաջ փոխելիս, մարտակոցի հրամատարը մարտկոցի կրակը ղեկավարելու գործը յանձնում է աւագ սպային և ին հետ առնելով անհրաժեշտ թւով զինուորներ, գնում է նոր դիրքի տեղամասը հետախուզելու և նոր դիրք ընտրելու։

97. Դիրքը դէպի յետ փոխելիս, մարտկոցի

հրամատարը մնում է իր հին դիտակէտում, իսկ հետախուզութեան և դիրք ընտրելու համար՝ ուղարկում է սպաներից մէկին, հետը անհրաժեշտ թւով զինուորներ․

## ԳԼՈՒԽ III.

### Դիրքի սարքաւորումը.

98. Դիրքն ընտրելուց յետոյ՝ անյապաղ սկսւում է նրա սարքաւորումը, որ է հետեւալը՝

ա. դիտողութեան կազմակերպումն․

բ. կապի հաստատումը.

գ. հրաձգութեան նախապատրաստութիւն․

Դիրքի սարքաւորման լրիւ լինելը կախւած է տրամադրելի ժամանակից, սարքաւորման գործը չպիտի յետաձգել տալ կրակի բանալը և պէտք է շարունակել կրակը բանալուց յետոյ էլ․

99. Մարտկոցի հրամատարը՝

1. կազմակերպում է դաշտը դիտելու գործը.

2. կազմակերպում է մարտկոցի, անմիջական պետի և հարևան հետևակ զօրապետի հետ կապ պահելու գործը, ղեկավարում է կապի հա-

մար եղած միջոցները.

Ծանօթութիւն. Կապը կարող է լինել ձայնի, տեսողական, հեռախօսի կամ սուրհանդակի միջոցով։ Գործողութեան ապահովութեան համար կարեւորագոյն ուղղութիւններով պէտք է կրկնակի կապ հաստատել։ Կապ հաստատելու և պահպանելու հոգսը՝ մարտկոցի հրամանատարի մօտ գտնուող սպայի կամ այդ նպատակի համար նշանակած զինուորի պարտականութիւնն է.

3. Անմիջական դիտողութեամբ և քարտէզով ուսումնասիրում է իր և թշնամու զօրքերի դասաւորման շրջանները և առջեւը գտնուող տեղանքը, հետեւեալ նպատակներով՝

ա. երեւան բերել հակառակորդին.

բ. նշան անել ամենանպաստաւոր կողմորոշ կէտերը.

գ. որոշել հակառակորդի դիրքերի և դիտակէտերի հաւանական դասաւորութիւնը, ինչպէս և դէպի նրանց տանող մատոյցները, թէ նրա և թէ իւրայինների կողմից.

4. Մարտկոցն ուղղում է դէպի կողմորոշ կէտը.

5. Որոշում է այն ուեայները, որոնք իբր ելակէտեն ծառայելու կրակ բանալու և կրակը դէպի այն կէտերը փոխադրելու, որտեղից ամենից հաւանական է թշնամու երեւալը. գիշերային հրաձգութեան ելակէտի համար ուեայ-ները որոշում և գրի է առնում ցերեկով.

6. Գտնում է ամենափոքր նշանոցները, որոշում է մեռեալ տարածութիւնները և կշռադատում է, թէ ինչպէս կարելի է ռմբակոծել այդ տեղերը.

7. Հրաձգութեան նախապատրաստութեան հետեանքները ուրուագծում է տեղագծական և համացուցային քարտերի վրայ.

8. Եթէ հարկաւոր է համարում, դիտողներ է ուղարկում առաջ և կողքերը, միջոցներ տալով նրանց իրենց դիտողութիւնները ապահով և արագ տեղ հասցնելու համար.

9. Կազմակերպում է թեւերի հսկողութիւնը և պաշտպանակի համար ցոյց է տալիս տեղեր.

10. Կարգադրում է, որ նոր դիրք անցնելու դէպքում հետախուզութիւնը կատարւի իր ժամանակին.

**100.** Մարտկոցի հրամատարը դիրքը սար-

քաւորելու աշխատանքներում և կրակ վարելիս բանեցնում է իր մօտ գտնւող ողային և հետա-խոյզ ու կապի խմբի զինւորներին։

**101.** Ասած ողան, նայած թէ ինչ ցուցում-ներ է արել մարտկոցի հրամանատարը՝

1. Մարտկոցը նախապատրաստում է մարտի համար (Հրանօթի Վարժութեան կանոնագրքի 6-րդ յօդւած).

2. Ստուգում է մարտկոցի կապը հրամա-տարի դիտակէտի հետ, իսկ եթէ կապ չկայ, անյապաղ հաստատում է այն և միջոցներ է ձեռնարկում այդ կապն անընդհատ պահպանե-լու համար.

3. Ճակատին մօտաւորապէս ուղղահայեաց զուգահեռաշարք է կազմում, որոշում է շարքի ազիմուտը և կարգադրում, որ հիմնական հրա-նօթը [1]) նշադրւի հրամանատարի դիտակէտի վե-րաբերմամբ.

Ծանօթութիւն. Երբ հրանօթները բաց են դասաւորւած՝ զուգահեռաշարքը կազմում է

---

1) Հիմնական հրանօթ կոչւում է հրամանատարի դիտակէտը տեսնող հրանօթներից նրան ամենամօտ կանգնածը։

միայն մարտկոցի հրամանատարի պատուէրով։

4. Մարտկոցի հրամանատարին զեկուցանում է ամենափոքր նշանոցները.

5. Կարգադրում է քողարկել հրանօթները և խրամատներ փորել.

6. Կարգադրում է, որ հրանօթներն իրար մէջ և քարշակների հետ անխափան հաղորդակցութիւն հաստատեն.

**102.** Դասակների պետերը կատարելով աւագ սպայի հրամաններն ու պատուէրները՝

1. Տեղեր են ցոյց տալիս հրանօթների և արկղերի եաքերի համար և կարգադրում են, որ նրանց քողարկեն։

2. Ցոյց են տալիս և պարզում նշանակէտը և ընդհանուր նշանակէտի անտեսանելի լինելու դէպքում, միջոցներ են ձեռք առնում, որ հրանօթները ժամանակին և կանոնաւոր կերպով ուղղուած լինին ուր հարկն է.

3. Աւագ սպային զեկուցանում են ամենափոքր նշանոցները.

4. զինուորներ են նշանակում փոսիկներ կամ խրամատներ փորելու։

**103.** *Հրանօթի ենթապաները կատարում են Հրանօթի Վարժութեան Կանոնագրքի ցուցումները։*

**104.** *Թարչակների և մարտկոցի օժանդակի հրամանատարները ընտրուած տեղերում տեղաւորուելուց յետոյ, առաջ սայլի հետ կապ են հաստատում՝ առաւելապէս տեսողական։*

## Հատուած IV.

## *Մարտկոցը մարտակարգի մէջ.*

## ՀՐԱՋԳՈՒԹԻՒՆ.

## ԳԼՈՒԽ I.

### Անձնական կազմի տեղերը.

**105.** *Մարտկոցի հրամանատարը գտնւում է հրամանատարական դիտակէտում։*

*Մարտկոցի հրամանատարի մօտ գտնուող սպան և հեռախօսը ու կապի խմբի զինուորները տեղաւորւում են մարտկոցի հրամանատարի ցուցումներով։*

*Աւագ սպան, իբրև մարտկոցի անմիջա-*

կան հրամանատար, գտնւում է մարտկոցի մօտ, որը յարմար կհամարի։

Դասակների պետերը գտնւում են իրենց դասակների սահմաններում։

Մարտկոցի հրամանատարական կայմի պաշտօնատարները ըստ կարելւոյն պատսպարւած տեղեր են բռնում։

**106.** Մարտակարգի մէջ մարտկոցի հրամանատարական կայմի պաշտօնատարները ձիերից իջնելով յանձնում են ձիերը, մարտկոցի հրամանատարը՝ փողհարին, աւագ սպան և դասակների պետերը՝ իրենց դասակների հետևակ արկղավարին, ենթասպաները՝ հրանօթների միջին լուծի ձիավարին։

**107.** Մարտկոցի վերական հսկում է կարգապահութեանը մարտկոցի թիկունքում և գըտնւում է քարշակների շրջանում։

**108.** Բոլոր քարշակներին հրամանատար է արկղավարներից մէկը, որին կանխապէս նշանակում է մարտկոցի հրամանատարը։

Երբ քարշակները տեղաւորւում են դասակներով ջոկ-ջոկ, նրանց հրամանատար լինելու համար իւրաքանչիւր դասակում նշանակւում է մի արկղավար։

## ԳԼՈՒԽ II.

### Կրակի ղեկավարութիւնը.

**109.** *Մարտկոցի հրամանատարը ընդհանրապէս աւագ սպայի միջոցով է ղեկավարում մարտկոցի կրակը։*

**110.** *Մարտկոցի հրամանատարը հրամանները կամ պատուէրները տալիս է ձայնով (անմիջապէս կամ հաղորդիչներով), պայմանական նշաններով, հեռախօսով և ազդանշաններով։*

**111.** *Աւագ սպայի հրամանները հաղորդւում են դասակապետի միջոցով և արտասանւում այնքան բարձր, որ իւրաքանչիւրը հաղորդելով հրամանը, վստահ լինի, թէ հրամանը ճշտութեամբ է ընդունել։*

*Մասնաւոր հրամանները, իրենց նշանակած տեղը հասնելուց յետոյ տալիս զէնք չեն հաղորդւում։*

*Հրաձգութեան համար դասակի պատրաստ լինելը՝ դասակապետները իմաց են տալիս ձեռք բարձրացնելով։*

**122.** *Մարտկոցի հրամանատարի հրամանը վերաբերում է ամբողջ մարտկոցին։*

Եթէ հրամանը պէտք է ընդունի մարտկոցի միայն մի մասից, այն ժամանակ նախապէս պիտի հրամայել՝

ԿՐԱԿՈՂ ՀՐԱՆՈԹ (դասակ, կիսամարտկոց).

կամ ԱՅՍ ԻՆՉ ՀՐԱՆՈԹ (դասակ, կիսամարտկոց)։

**113.** Ուրաքանչիւր նշանակէտի վրայ արձակելիս, երբ առաջին դիտողութեամբ պարզւում է, որ հրաձգութեան ուղղութիւնը ճիշտ է, պէտք է հրաման տալ՝

ՃԻՇՏ է.

**114.** Մարտկոցի մի հրանօթի նկատմամբ զուգահեռաշարք կազմելու համար ընդհանուր կանոն է, որ պէտք է հրաման տալ՝

1. ԱՋ (ձախ, այս ինչ) ՀՐԱՆՕԹԸ ՆՇԱԳՐԻ ԱՅՍ ԻՆՉ ԱՌԱՐԿԱՆ.
2. ՆՇԱՆ ԱՅՍ ԻՆՉ ՏԵՂԻՆ, ԱՆԿԻՒՆԱՉԱՓ 00–00.
3. ԱՋՆ ՈՒ ՁԱԽԸ (այսինչն ու այնինչը) ԻՐԱՐ ՆՇԱԳՐԵՆ.
4. ԿՐԱԿԸ ԲԱՑՆԵԼ ԱՋ (ձախ, այսինչ( ՀՐԱՆՕԹԻՑ 00–00 (կամ 04–04).

*կամ* ԿՐԱԿԸ ՄԻԱՑՆԵԼ ԱՋ *(ձախ այսինչ)* ՀՐԱՆՈԹԻՆ 00–00։

**Առաջին հրամանով** *մատնանշած հրանոթը նշանառութիւնը կատարում է ցոյց տրւած* **ուղղութեամբ.** *անկիւնաչափի ստացած հաստատումը դասակապետները հաղորդում են աւագ սպային ասելով*

ԱՋԻՆԸ *(ձախինը, այսինչինը)* ԱՆԿԻՒ-ՆԱՉԱՓ 00 00.

*Սկզբնական նշանառութեան համար պէտք է նշանակել առաւելապէս թեթեւ հրանոթներից մէկը։*

**Երկրորդ հրամանով** *բոլոր հրանոթները հաստատում են հրամայւած անկիւնաչափը եւ նշան են դնում։*

*Անկիւնաչափի հաստատումը նշանակւում է առաջին հրամանով կատարած նշանառութեան ժամանակ ստացւած տւեալների համաձայն։*

*Անկիւնաչափի հաստատումը միշտ հրամայւում է* **հաստոցի խազերի ամբողջ տասնեակներով** *(առանց միաւորների)։*

**Երրորդ հրամանով** *մատնանշած հրանոթներից իւրաքանչիւրի № 2-ները առնում են*

նշանաձողը և ուղղաձիգ պահում համացոյցի մօտ. Նոյն հրանօթների № 1-ները հրանօթների մեքենում անկած նշանաձողերի ուղղութեամբ նշագրում են իրենց հրանօթը.

Դասակապետներին անկիւնաչափերի հաստատման նշադրութեան տուեալները յայտնում են ուղղ. սպային, որից յետոյ № 2-ները նշանաձողերը տեղն են դնում: Փոխադարձ նշադրութեան համար, որքան հնար է, պիտի խուսափել ամենից հեռու գտնուող հրանօթներ նշանակել:

Չորրորդ հրամանով մատնանշած հրանօթի անկիւնաչափը մնում է նոյնը, իսկ միւսները հրանօթի ենթասպաների հրամաններով փոխում են անկիւնաչափերի հաստատունները:

Կրակը միացնելիս անկիւնաչափերի հաստատունները պիտի փոխել դէպի հրամանով մատնանշած հրանօթի կողմը, իսկ բաժնելիս՝ պիտի փոխել այդ հրանօթից:

Չորրորդ հրամանով որոշւող զուգահեռութեան աստիճանը տրւում է հետեւեալ կերպով՝ նախ գտնում է փոխադարձ նշադրւող հրանօթների անկիւնաչափերի տարբերութիւնը, հանում է 30—00, այս մնացորդը բաժնում է,

նշագրուած հրանօթների միջանցների թեւի վրայ։

**115.** *Մարտկոցի բոլոր գործողութիւնները դադարեցնելու համար պէտք է հրաման տալ՝*

*ԿԱ՛Ց։*

*Մարտկոցի պաշտօնատարները դադարեցնում են բոլոր գործողութիւնները մինչև հետևեալ հրամանը կամ պատւէրը։*

*ԿԱ՛Ց հրամանը ընդունում ու հաղորդում են թէ դասակապետները և թէ հրանօթի ենթասպաները, միաժամանակ և բոլորը բարձրացնում են իրենց ձեռքը։*

**116.** *ԿԱ՛Ց հրամանը տրւում է, երբ*

*1. փոխւում են նպատակն ու գնդիկը,*

*2. գրի է առնւում նպատակը,*

*3. դադարեցւում է սխալ հրամանի գործադրութիւնը, և*

*4. երբ որևէ դէպքում մարտկոցի հրամատարը այդ հարկաւոր է համարում։*

**117.** *Սխալ հրամանն ուղղելու համար պիտի հրաման տալ՝*

*1. ԿԱ՛Ց.*

*2. ՆԱԽԿԻ՛Ն ՀԱՍՏՈՒՄՈՎ.*

*Այն հրանօթները, որոնք արդէն կատարել*

են սխալ հրամայուած վերջին հատուածը, վերականգնում են նախկինը։

**118.** *Դէպի մի քանի նպատակներ ուղղուած հրաձգութեան ժամանակ, մարտկոցի հրամանատարը համարագրում է ամեն մի նպատակ, գրի է առնում ճանկը և հրաման է տալիս՝*

1. ԿԱՑ.
2. ՆՊԱՏԱԿ 00. (Նպատակի համարը)։
3. ՃԱՆԿ 00–00.

*Այս հրամանով աւագ սպան գրի է առնում նպատակի համարը և ճանկը, իսկ դասակապետները և հրանօթների ենթասպաները՝ նպատակի համարը և իրենց հրանօթների անկիւնաչափի ու հարթաչափի վերջին հատուածները։*

## ԳԼՈՒԽ III.

### Կրակ բանալը եւ վարելը։

**119.** *Մարտկոցի հրամանատարը կրակ բանալու համար ցուցումներ ստանալուց յետոյ՝*

*1. Գտնում է նպատակը՝ եթէ նոյնիսկ դրա համար կարիք լինի դիտակէտը փոխել կամ հեխոյզներ ուղարկել.*

2. Որքան հնարաւոր է, որոշում է նպատակի ձեւերը, նրա ճակատի լայնքն ու խորութիւնը, իր մարտկոցի ճակատի վերաբերմամբ ունեցած դրութիւնը, թշնամու աչքից և կրակից ծածկելու ձևը, թաքստոցի համեմատութեամբ ունեցած դրութիւնը և նպատակի մօտ գտնուած տեղանքի բնոյթը։

3. Ընտրում է նշանառութեան ձևը (ուղղակի, կամ անուղղակի, բաժնակի կամ անբաժան)։

4. Ուղղակի նշանառութեան դէպքում, միջոցներ է ձեռք առնում, որ մարտկոցի անձնական կազմը արագ և հեշտ կերպով գտնի տրուած նպատակը։

5. Ընտրում է գնդիրը և հրաձգութիւնը վարելու եղանակը։

120. **Բաժնակի Նշանառութեամբ** հրաձգութիւն կատարելու համար, պէտք հրաման տալ՝

1. ԱՅՍ ԻՆՉ ՆՊԱՏԱԿԻՆ.
2. ԱՆԿԻՒՆԱՉԱՓ 00–00 (բուսօլ 00–00).
3. ՀԱՐԹԱՉԱՓ 00–00.
4. ՆՇԱՆՈՑ 00–00. ՓՈՂԱԿ 00.

(Զարկ, կրակէ)։

Աւագ պահին, հաղորդելով բոլոր հրամանները նոյնը թէ հրամատարական դիտակէտի կամ զուգահեռաշարքի որոշուած ազիմուտի միջոցով ինչ նշագրութիւններ են ստացել 2-րդ հրամանի փոխարէն, հրաման է տալիս՝

ԵԽՄ ԱՋ (ձախ)0-00.

Եթէ մարտկոցի հրամատարը ուզում է անձամբ ցոյց տալ նշանառութեան կէտը, հրաման է տալիս՝

1. ԱՑՍ ԻՆՉ ՆՊԱՏԱԿԻՆ.
2. ՆՇԱ՛Ն ԱՅՍ ԻՆՉ ՏԵՂԻ՛Ն.
3. ԱՆԿԻՒՆԱՉԱ՛Փ 00-00.
4. ԿՐԱԿԸ ԲԱԺԱՆԵ՛Լ ԱՋ (ձախ, այսինչ) ՀՐԱՆՕԹԻ՛Ց 00-00.

   կամ ԿՐԱԿԸ ՄԻԱՑՆԵ՛Լ ԱՋ (ձախ, այսինչ) ՀՐԱՆՕԹԻՆ 00-00.
5. ՀԱՐԹԱՉԱՓ 00-00.
6. ՆՇԱՆՈ՛Ց 00. ՓՈՂԱ՛Կ 00 (զարկ կարտէչ)։

Աւագ պահին տալիս է նոյն հրամանները։

**121.** Անբաժան նշանառութեամբ հրաձգութեան համար, հրաման պիտի տալ՝

1. ԱՅՍ ԻՆՁ ՆՊԱՏԱԿԻ՛Ն.

2. ՈՒՂՂԱԿԻ՛ ՆՇԱՆ.

3. ՆՇԱՆՈ՛Ց 00. ՓՈՂԱ՛Կ 00. (զարկ կարտեչ)։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

Դասակապետներն ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆՈՎ, երկրորդ հրամանի փոխարէն պիտի հրաման տան՝

ԱՆԴՐԱԴԱՐՁԻ՛Կ—0.

Ուղղակի նշանով հրաձգութեան ժամանակ դասակապետները և հրանօթի ենթասպաները ամէն միջոց պիտի ձեռք առնեն, որ նշանառուների համար պարզ լինի նպատակը։

Նշանակէտը, իսկ անդրադարձիկով հրաձգութեան ժամանակ նաև անկիւնաչափերի հատուածները, (ուղղում, քամի և կոնեչի թերուածք լինելիս), հրամայում են դասակապետները։

**122.** Եթէ ուղղութիւնը զրւում է դիտափողով կամ անդրադարձիկով, իսկ բարձրութիւնը հարթաչափով, պէտք է 121-րդ յօդւածի մէջ յիշւած հրամանները տալ, աւելացնելով ՀԱՐԹԱՉԱ՛Փ 00—00. հրամանը (ՆՇԱՆՈ՛Ց 00. հրամանից առաջ)։

**123.** Ռումբով հրաձգութեան համար բոլոր

*դէպքերում պիտի տալ* 120, 121 122-*րդ յօդւածների մէջ յիշուած հրամանները, բայց նախապէս պիտի հրաման տալ՝*

*ՌՈՒՄԲՈՎ։*

*Իսկ փողակի ձայնաման համար հրաման չպէտք է տալ։*

124. Անբաժան նշանառութիւնից բաժնակի նշանառութեան *անցնելու համար պիտի հրաման տալ՝*

*ՆԻՇԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ։*

*Իւրաքանչիւր հրանօթի անկիւնաչափի ու հարթաչափի հաստատունները հրամայում են հրանօթի ենթասպաները, հրանօթների նշագրութիւնից ստացուած տւեալների համաձայն։*

125. Անբաժան նշանառութիւնից բաժնակի, բայց դիտափողով *կամ* անդրադարձիչով *նշանառութեան անցնելու համար, պէտք է հրաման տալ՝*

*ՀԱՐԹԱՉԱՓՈՎ։*

126. *Մարտկոցը հրաձգութիւնը կատարում է գործադրելով հետեւեալ կարգերից մէկը.*

1. *Խմբական կրակ.*
2. *Հատ-հատ կրակ.*

3. Շտապ կրակ։

**127.** Եթէ ցանկալի է հրաձգութիւնը կատարել որոշ դասակից (հրանօթից), նախապէս պիտի հրաման տալ՝

ԱՐՁԱԿԻ ԱՅՍ ԻՆՉ ԴԱՍԱԿԸ, (հրանօթը)։

**128.** Խմբական կամ հատ-հատ կրակ բանալ առհասարակ պէտք է մարտկոցի հրամատարի մօտիկ թեւից։

Ծանօթութիւն. Եթէ անհրաժեշտ է կրակ բանալ միւս թեւից, մարտկոցի հրամատարը ԿՐԱԿ հրամանից առաջ հրաման է տալիս՝

ԱՋ ՀՐԱՆՕԹ (դասակ).

կամ ՁԱԽ ՀՐԱՆՕԹ (դասակ)։

**129** Խմբական կրակ բանալու համար, պիտի հրաման տալ՝

1. ՄԱՐՏԿՈՑԻ (դասակի) ԿԱՐԳՈՎ.
2. ԿՐԱԿ։

Աւագ սպան հրաման է տալիս՝

1. ՄԱՐՏԿՈՑԻ (դասակի) ԿԱՐԳՈՎ.
2. ԱՋ ՀՐԱՆՕԹ (դասակ) կամ ՁԱԽ ՀՐԱՆՕԹ (դասակ)։

Նայած, թէ որ թեւն է աւելի մօտ մարտ-

կոցի հրամատարին։

3. ԿՐԱ՛Կ։

Դասակապետները հրաման են տալիս՝

1. ՄԱՐՏԿՈՑԻ՛ (դասակի) ԿԱՐԳՈՎ.
2. Ա՛Ջ ՀՐԱՆՈԹ (դասակ) կամ ՁԱ՛Խ ՀՐԱՆՈԹ (դասակ).
3. ԿՐԱ՛Կ։

Դասակներով կրակելու ժամանակ դասակապետները ԿՐԱԿ հրամանը հաղորդում են մինչև հերթական դասակի պետը ներառյալ։

Հրանոթների մատնանշած խմբի (մարտկոցի դասակի) արձակումները կատարում են դասակապետների ԱՅՍԻ՛ՆՉԸ հրամանով, հրանոթների դասավորության կարգով և իրարից այնքան կարճ ժամանակ յետոյ, որ միայն հնար լինի որոշելու իւրաքանչիւր հրանոթի ուղղութիւնը։

**130. Հաց-հաց կրակ** բանալու համար պիտի հրաման տալ՝

1. Հրանոթների կարգով ՀՐԱՆՈ՛Թ-ՀՐԱՆՈ՛Թ.
2. ԿՐԱ՛Կ։

Աւագ սպան հրաման է տալիս՝

1. Հրանոթների կարգով ՀՐԱՆՈ՛Թ-

ՀՐԱՆՈԹ.

2. Ա.Ջ (ձախ) ՀՐԱՆՈԹ.

Նայած թէ նրանցից որն է ուելի մոտ մարտիկցի հրամատարին։

3. ԿՐԱԿ։

Դասակապետները հրաման են տալիս՝

1. Հրանոթների կարգով ՀՐԱՆՈԹ–ՀՐԱՆՈԹ.

2. Ա.Ջ (ձախ) ՀՐԱՆՈԹ.

3. ԿՐԱԿ։

ԿՐԱԿ հրամանը դասակապետները հաղորդում են մինչև հերթական դասակի պետը ներառեալ։

Արձակինը կատարում է դասակապետը ԱՅՍԻ՛ՆՉԸ.

հրամանով։

131. Շտապ կրակ. բանալու համար, պէտք է հրաման տալ՝

1. ՄԻ՛ ՓԱՄՓՈՒՇՏ (երկու փամփուշտ.

2. ՇՏԱ՛Պ ԿՐԱԿ։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

Հրանոթները կատարում են հրամայուած թւով արձակինները, հէնց որ նրանցից իւրաքան-

չիւրը պատրաստ է լինում հրաձգութեան։

132. Այնուհետև կրակը շարունակելու համար անկիւնաչափի, հարթաչափի, նշանոցի և փողակի նախկին կամ փոփոխած հաստատումով, առանց կարգը փոփոխելու, խմբական կամ հատ-հատ արձակումների համար պէտք է հրաման տալ՝

ԿՐԱԿ.

Շտապ կրակի համար՝

ՇՏԱՊ ԿՐԱԿ.

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

Դասակապետները հրամանը հաղորդում են մինչև հերթական դասակի պետը, իսկ մարտկոցի կարգով կրակելիս՝ բոլորն են կրկնում։

133. Անընդհատ շտապ կրակ վարելու համար՝ պիտի հրաման տալ.

ԿԱՐՏԷՉ։

Հրանօթները, հէնց որ նրանցից իւրաքանչիւրը պատրաստ է լինում հրաձգութեան, անընդհատ կրակ են վարում և արձակումներ կատարում, հրանօթի ենթասպաների ԱՅՍ ԻՆՉԸ հրամանով։

134. Կրակելու հրամայուած կարգը պահ-

ւում է, մինչև որ մի նոր հրամանով կփոխւի այդ կարգը։

**135.** Ամբական կամ հատ-հատ արձակիններով հրաձգութեան ժամանակ, (դասակի կարգով) դասակները և հրանօթները կրակը վարում են յաջորդական կարգով և հերթի վերջացնելուց յետոյ նորից անցնում են այն թևին, որտեղից կրակը սկսւած էր։

**136.** Երբ կրակը սկսող հրանօթի հակառակ թևում գտնւող հրանօթը արձակինը կատարում է, նրա դասակի պետը արտասանում է՝

ՀԵՐԹ.

Միջին դասակների պետերն էլ կրկնում են այդ խօսքը։

**137.** Հերթական դասակի կամ հրանօթի հրաձգութեան անպատրաստ լինելը չի կարող պատճառ լինել հրաձգութեան ուշացման։ Այսպիսի դէպքում դասակապետը հաղորդում է՝

ԱՅՍ ԻՆՉ ԴԱՍԱԿԸ (հրանօթը) ՄՆԱՑ.

Հրաձգութիւնն անցնում է հետևեալ դասակին (հրանօթին) և, երբ հրաձգութիւնը կատարւում է դասակի կարգով, հետևեալ հերթական դասակը երկու արձակին է կատարում։

Հերթը թողած դասակը (հրամնօթը) կրակում է միւս անգամ հերթն իրեն հասնելիս։

**138.** Հատ-հատ արձակին կատարելիս, երբ մարտկոցի հրամատարը չի ուզում արձակին կատարելու ժամանակը նշանակել, հրաման է տալիս՝

1. ԱՄԵՆ 00 ՎԱՅՐԿԵԱՆ (րոպէ) (արձակել).
2. ԿՐԱԿ։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

Հերթական հրամնօթներն իրենց դասակապետների հրամանով արձակինները կատարում են նշանակած ժամանակամիջոցներից յետոյ։

**139.** Մարտկոցի հրամանատարի ցուցումով նորից արձակիններ կատարելու համար, պէտք է հրաման տալ՝

ՀՐԱՄԱՆՈՎ.

Աւագ սպան տալիս է նոյն հրամանը։

**140.** Հրաձգութիւնն սկսելու և շարունակելու ժամանակ, բոլոր հրամնօթներն անմիջապէս կատարում են հրամայած հատուածները և նշան դնում, իսկ լցնում են՝

ա. Շրապնելով հրաձգութեան ժամանակ

փողակի հատուածի հրամանով, իսկ եթէ այդ հրամանը չի տրւի՝ փողակի նախկին հատուածով, դասակապետները

ԿՐԱԿ.

կամ ՇՏԱՊ ԿՐԱԿ.

հրամանով։

Եթէ հրաձգութիւնը կատարւում է մարտկոցի կարգով կամ շտապ կրակով, այն ժամանակ լցնում են մարտկոցի բոլոր հրանօթները. իսկ եթէ հրաձգութիւնը կատարւում է դասակների (հրանօթների) կարգով, այն ժամանակ լցնում են միայն հերթական հրանօթները։

Ծանօթութիւն. Եթէ բոլոր հրանօթները լցրած են և հրաման է տրւում կրակ վարել դասակների (հրանօթների) կարգով, այն ժամանակ ոչ հերթական հրանօթները պարպւում են։

բ. Ռումբով կրակելիս մարտկոցի բոլոր հրանօթները անընդհատ լցնում են, ինչ կարգ էլ որ լինի։

141. Անկիւնաչափի հատուածը փոփոխելու համար՝ պէտք է հրաման տալ՝

ԵԻՍ Ա.Զ (ձախ) 0-00։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

142. Կրակը միացնելու կամ բաժանելու համար, պէտք հրաման տալ՝

ԿՐԱԿԸ ՄԻԱՑՆԵԼ ԱՅՍԻՆՉ ՀՐԱՆՈԹԻՆ (դասակին) 00-00.

կամ ԿՐԱԿԸ ԲԱԺՆԵԼ ԱՅՍ ԻՆՉ ՀՐԱՆՈԹԻՑ (դասակից) 00-00։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

143. Հարթաչափի հաստատումը փոփոխելու համար, պէտք հրաման տալ՝

ՀԱՐԹԱՉԱՓՆ ԱՒԵԼԻ (պակաս) 0-00.

կամ ՀԱՐԹԱՉԱՓ 00-00։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանները։

Երբ հրանոթներն իրարից զգալի կերպով տարբեր բարձրութեամբ դանազան հորիզոնների վրայ են դասաւորուած, այն ժամանակ աւագ սպան կամ պէտք դասակապետներին հրամայի, որ նրանք մարտկոցի հրանոթներից մէկի համեմատ, որ ինքը սպան ցոյց է տալիս. իրենց հրանոթների հարթաչափները համապատասխան կերպով հանեն, կամ պէտք հրաման տալ՝

1. ՀԱՐԹԱՉԱՓ 00-00.

2. ԱՋ (ձախ) ՀՐԱՆՈԹԻՑ ՍԱՆԴՂԱ-

ԿՈՎ. 00–00 ԱՍՏԻՃԱՆ ԱՒԵԼԻ (պակաս)։

Այսպիսի դէպքում հրանօթների ենթասպաները ՀԱՐԹԱՁԱՓ 00–00 հրամանը կատարելիս՝ ի նկատի են առնում հարթաչափի հատուման ուղղումները։

144. Նշանոցի հատումը փոփոխելու համար՝. պիտի հրաման տալ՝

00 (նոր նշանոցի խազերի թիւը)

Աւագ սպան տալիս է նոյն հրամանը։

Եթէ անհրաժեշտ է դասակների (հրանօթների) համար նշանակել միևնոյն որոշ մեծութեամբ տարբերւող զանազան նշանոցներ համապատասխան փողակներով, այն ժամանակ պիտի հրաման տալ՝

1. ՆՇԱՆՈՑ 00.
2. ՓՈՂԱԿ 00.
3. ՍԱՆԴՂԱԿՈՎ 00–00 ԱՍՏԻՃԱՆ ՅԱՌԱՋ (յետ).

կամ 00 ԱՍՏԻՃԱՆ ՅԱՌԱՋ (յետ) (դասակի սանդղակով)։

Աւագ սպան հրամայում է՝

1. ՆՇԱՆՈՑ 00.

2. ՓՈՂԱԿ 00.

3. ԱՋ (ձախ) ՀՐԱՆՕԹԻՑ ՍԱՆԴՂԱԿՈՎ 00 ԱՍՏԻՃԱՆ ՑԱՌԱՋ (յետ).
կամ ԴԱՍԱԿՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿՈՎ ԱՋԻՑ (ձախից)00-00 ԱՍՏԻՃԱՆ ՑԱՌԱՋ (յետ)։

Նայած թէ որ թևն է աւելի մօտ մարտկոցի հրամատարին։

Հրամանի մէջ յիշած դասակը (հրանօթը) համարում է հրամայուած նշանոցն ու փողակը, իսկ միւսները՝ աստիճանաբար աւելի կամ պակաս։

**145.** Փողակի հաստումը փոփոխելու համար պիտի հրաման տալ՝

ՓՈՂԱԿ 00 (զարկ կարտէշ)։

Աւագ սպան տալիս է նոյն հրամանը։

Եթէ անհրաժեշտ է մի ընդհանուր նշանոցով փողակների իրարից միենոյն որոշ մեծութեամբ տարբերւող զանազան հաստումներ նշանակել՝ պիտի հրաման տալ՝

1. ՆՇԱՆՈՑ 00.
2. ՓՈՂԱԿ 00.
3. ՓՈՂԱԿ ՍԱՆԴՂԱԿՈՎ 00-00 ԱՍՏԻՃԱՆ ՑԱՌԱՋ (յետ)։

Աւագ սպան պիտի հրամայի՝

1. ՆՇԱՆԱՌՑ ՕՕ.

2. ՓՈՂԱԿ ՕՕ.

3. ՓՈՂԱԿՆ ԱՋ ՀՐԱՆՈԹԻՑ (ձախ հրանօթից) ԾԱՆԴՂԱԿՈՎ ՕՕ ԱՍՏԻՃԱՆ ՅԱՌԱՋ (յետ)։

Նայած թէ հրանօթներից որն է մարտկոցի հրամատարին աւելի մօտ։

Հրամանի մէջ յիշւած հրանօթը հրամայւած փողակն է ստանում, իսկ միւսները՝ անհրաժեշտ աստիճաններով աւելի կամ պակաս։

146. Իւրաքանչիւր հրանօթի (դասակի) ազդանշերի բացարձակ մեծութիւնները որոշւում են՝ զուգահեռաշարքի կամ անհրաժեշտ հրամայւած աստիճանի թիւը բազմապատկելով միջանցների թւի վրայ, մինչև հրամանում ցոյց տըրւած հրանօթը (դասակը)։

147. Նպատակը փոխելու (կրակը փոխադրելու) համար, պիտի հրաման տալ՝

1. ԿԱՑ.

2. ԱՅՍ ԻՆՉ ՆՊԱՏԱԿԻՆ.

Եւ եթէ հարկաւոր է, պէտք է նաև աւեացնել հաստատունները փոփոխող հրամանները։

Այդ տպած տողն է նոյն հրամանները։

148. Գծիչքը փոփոխելու համար, պէտք հրաման տալ՝

1. ԿԱՑ.

2. ՇՈՒՄԲԵՐԴ.

կամ ՇՐԱՊՆԵԼ ՓՈՂԱԿ 00 (զարկ, կար-

տէշ)։

Այդ տպած տողն է նոյն հրամանները։

149. Հրամանների պարզութիւնը, կլոսկի ժամանակաւորակըս և բազմաձևին զարգացումը, անձնական կարծի պատասխանումը, համարների համակարգ և համարը կատարվում են Հրամանի Վարժութեան Կանոնագրքի համաձայն

Հատուած V.

*Մասնակցութիւնը կոդումների լեզուն· նկարներն մասի առարկաների փոխարինումը եւ նորութիւնը.*

150. Մարտկոցի հրամանատարը պարտաւոր է՝

1. Ճշտորոշութեամբ ընտրելու փամփուշտները.

2. Ժամանակին լրացնել նրանց պակասը.

2. Մարտի վճռական րոպէների համար աւե-լացնել փամփուշտների պաշարը։

115. Մարտկոցը բոլոր փամփուշտներն ար-ձակելուց յետոյ շարունակում է մնալ դիրքում եւ զինուորներին պատսպարելով սպասում է պա-շարը լրացնելուն։

152. Ընդհանուր կանոն է, որ հրանօթնե-րին փամփուշտ մատակարարում է հրանօթ-ների մօտ գտնուած արկղերից, իսկ մերձա-կայութեան դէպքում՝ հրանօթների քարշակ-ներից։

Հրանօթների քարշակների փամփուշտների համալիրը կազմում է մարտակարգ պաշար և միայն ծայրայեղ դէպքերում է գործածւում։ Նրանցից բանեցրած մասը լրացւում է առաջին իսկ հնարաւորութեան դէպքում։

153. Եթէ արկղերը հրանօթների մօտ չեն, այդ դէպքում մարտկոցի հրամանատարի կամ աւագ սպայի նախապէս յատուկ տրուած պատւէրով, հրանօթները քարշակներից հանելիս, մատակա-րարելու համար քարշակներից դուրս են բերում բոլոր փամփուշտներով լի վանդակները։

Երբ երկարատեւ մարտ, կամ հրանօթներին

փամփուշտ մատակարարելու դժվարությունն է նախատեսում, մարտկոցի հրամանատարը հրանոթները քարշակներից հանելիս՝ պատվիրում է հանել նաև արկղերի քարշակներից փամփուշտներով լի բոլոր վանդակները։

Երկու դեպքում էլ փամփուշտներով լի վանդակները դարսում են հրանոթների մոտ և, կարելի եղածին չափ, հակառակորդի հարվածներից ծածկված (պատրհաններում, փոսիկներում և նմ.)։

**154.** Փամփուշտները բանեցնելու հսկողությունը ենթասպաների և դասակետների պարտականությունն է, որոնք պարտավոր են միշտ իմանալ հրանոթի մոտ կամ դասակում եղած փամփուշտների թիվը։

**155.** Փամփուշտների մատակարարումը պետք է կատարել թշնամու աչքից ծածուկ, իսկ եթե հնարավոր է, նաև նրա կրակից դուրս։ Լրացումի ձևը ցույց է տալիս ավագ սպան, եթե մարտկոցի հրամանատարը այդ մասին չի կարգադրել։

**156.** Ամեն անգամ, երբ արկղերում եղած փամփուշտների կեսի չափը բանեցրած է լինում, դասակապետները այդ մասին պարտավոր են

զեկուցանել ավագ սպային, որը մարտկոցի օժան-դակից հարկավոր թվով արկղեր է պահանջում, իւրաքանչիւր դէպքում զեկուցանելով այդ մա-սին մարտկոցի հրամանատարին։

**157.** Արկղավարներից մէկի առաջնորդու-թեամբ արկղը, որքան կարելի է, աւելի է մօ-տենում հրանօթներին։

Արկղաւորները, իսկ եթէ պէտք է, դասա-կապետների կարգադրութեամբ նաև 5-րդ և 6-րդ համարները․ հանում են փամփուշտներով լի բոլոր վանդակները և նրանց տեղը դնում են պարկուճներով լի վանդակներ,, որից յետոյ արկ-ղը դնում է մարտկոցի օժանդակի մօտ։

Եկած արկղից հանած վանդակները դասա-կապետները բաժանում են հրանօթներին, իսկ համարներն այդ վանդակները դարսում են հրա-նօթների մօտ կանգնած արկղերի մէջ։

**158.** Եթէ մարտի կամ տեղանքի պայման-ները թոյլ չեն տալիս, որ մարտկոցի օժանդակի արկղերը հրանօթներին մօտենան, այդ դէպքում նրանք մօտակայ պատսպարանի ետևն են կանգ-նում։ Արկղաւորները հանում են բոլոր փամ-փուշտները։ Հրանօթների մօտից ուղարկած հա-

մարները իրենց հետ բերում են պարկուճներով լի վանդակները և տանում են հրանոթների մոտ փամփուշտներով լի վանդակները։

Եթէ համարները դժւարանում են փամփուշտներ մոտ բերել, ապա սպայի կարգադրութեամբ փամփուշտներ բերում են ենթասպաների ձիերով, կամ մի այլ կերպ։

**159.** Մարտկոցի օժանդակի փամփուշտները լրացնում են կրանքի առաջաւոր շարքերից, նրա հետ ուղարկելով մարտկոցի օժանդակի դատարկ արկղերը, արկղավարներից մէկի առաջնորդութեամբ։

Լրացումը կատարւում է փամփուշտներով լի վանդակները մարտկոցի օժանդակի դատարկւած արկղերի մէջ դնելով, որտեղից լի վանդակների փոխանակ, վերադարձւում են դատարկները։

Արկղերի փոխանակութիւն չի թույլատրւում։

Լցրած արկղերի վերադառնալուց յետոյ՝ մարտկոցի օժանդակի պետը ընդունում է բերած փամփուշտները կրանքից տըւած կարօնների համեմատ։

**160.** Այն դէպքում, երբ մարտկոցի օժան-

դակի պաշարը վերջացել է, իսկ արկղերը դեռ չեն վերադարձել կրանքից, փամփուշտների պակասը լրացնում է նախ արկղերի, ապա հրանոթների քարշակներից։ Այս դէպքում քարշակների հետ վարւում են ճիշտ այնպէս, ինչպէս մարտկոցի օժանդակի արկղերի հետ։

Կրանքից արկղերի գալուն պէս, հրանոթի քարշակները լցւում են, որի համար մարտկոցի օժանդակի պետը քարշակների հրամատարի պահանջով քարշակների մօտ է ուղարկում անհրաժեշտ թւով արկղեր։

**161.** Մարտկոցի հրամատարը բացառիկ դէպքերում կարող է իր պատասխանատւութեամբ գրաւոր պահանջով կանչել կրանքի առաջաւոր շարանից որոշ թւով արկղեր, (ոչ աւելի քան չորս արկղ) որպէսզի սրանք անմիջապէս մատակարարեն մարտկոցին։ Այս դէպքում եկած արկղերը մարտկոցի պահեստի դերն են կատարում։

**162.** Դիրքը փոխելիս մարտկոցի հրամատարը կարգադրում է, որ մարտական մասի արկղերը բաւականաչափ փամփուշտներ ունենան։ Եթէ կարիք լինի, մարտական մասի արկ-

վերը փոխարինելու համար բերում են մարտկոցի օժանդակի արկղերը։

**163.** Դիրքը փոխելիս դէպի առաջ, եթէ հին դիրքում վանդակներ և պարկուճներ մնան, դրանց հաւաքելը մարտկոցի օժանդակի պետի պարտականութիւնն է։ Դիրքը դէպի յետ փոխելիս՝ բոլոր վանդակներն ու պարկուճները աւագ սպայի կարգադրութեամբ պէտք առաջուց ժողովւած լինեն։

**164.** Մարտը վերջանալուց յետոյ՝ աւագ սպան և մարտկոցի օժանդակի պետը մարտկոցի հրամանատարին տեղեկութիւն են ներկայացնում մնացած փամփուշտների թւի մասին, իսկ օժանդակի պետը, բացի այդ, տեղեկութիւն է տալիս նաև կրանքից ստացած փամփուշտների քանակի մասին, ներկայացնելով կրանքի տւած կտրօնները։ Այս տեղեկութիւնների հիման վրայ կազմւում է բանեցրած փամփուշտների հաշիւը։ Մի օրում բանեցրած փամփուշտների մասին մարտկոցի հրամանատարը զեկոյց է ուղարկում վեր՝ ըստ կարգի հրամանատարութեան։

**165.** Մարտը վերջանալուց կամ ժամանակաւորապէս դադարեցնելուց յետոյ աւագ սպան,

մարտկոցի օժանդակի դեմը և քարշակների հրամանուն համապատասխան միջոցների են դիմում հրանոթների մոտի արկղերը, հրանոթների և արկղերի քարշակների, ինչպես և մարտկոցի օժանդակի արկղերի փամփուշտների պակասը լրացնելու համար։

*Զինուորների ու ձիերի կորուստի լրացումը.*

**166.** *Իւրաքանչիւր հրանոթի և արկղի զինուորների ու ձիերի կորուստի լրացումը կատարւում է Հրանոթի Վարժութեան Կանոնագրքի համաձայն։ Հարկ եղած դէպքում դասակապետը իր դասակի հրանոթների զինուորների ու ձիերի թիւը հաւասարեցնում է մէկից միւսին տալով. իսկ դասակների համար նոյնն անում է մարտկոցի հրամանատարը։ Ընդհանրապէս մարտկոցի հրամանատարն է պատւիրում մարտկոցի մարտական մասի կորուստը լրացնելու համար՝ մարտկոցի օժանդակից զինուորներ և ձիեր բերել տալ։*

**167.** *Եթէ մարտի միջոցին կորուստները մեծ են եղել և մարտկոցի սեփական միջոցները սկսում են պակասել, մարտկոցի հրամանատարի*

պատուէրով զինուորներ կարող են բերել մարտկոցին տուած պաշտպանակից:

Մարտից յետոյ մարտկոցի զինուորների և ձիերի կորուստների լրացումը կատարւում է, բարձրագոյն պետի կարգադրութեամբ, որին կորուստների մասին, հաշիւ պէտք է ներկայացնի մարտկոցի հրամանատարը:

**168.** Զինուորների և ձիերի կորուստը ու նիւթեղէն մասի վնասները ոչ մի դէպքում չեն կարող հիմք դառնալ մարտկոցը գծից հանելուն:

### Նիւթեղէն մասի առարկաների փոխարինումն ու նորոգութիւնը:

**169.** Շարժման ժամանակ առաջացած վնասուածքները պէտք է ի նկատի չառնուեն, եթէ հրանօթն ու արկղը դեռ ևս տեղից տեղ անցնելու ընդունակ են: Յամենայն դէպս հրանօթների կամ արկղերի կանգ առնելը ընաւ հիմք չպիտի ծառայի միւսներին ևս յետ պահելու: Եթէ առաջ շարժւելիս մի հրանօթ ստիպւած է լինում կանգ առնել, դասակապետը կարգադրում է վերականգնել նրա շարժւելու ընդունակու-

թիւնը և ինքը գնում միանում է մարտկոցին։ Դէպի յետ շարժւելիս դասակապետը մնում է կանգ առած հրանօթի մօտ և ամէն միջոցի դիմում է նրան իր հետ տանելու համար։

Եթէ արկղն է կանգ առնում, արկղավարն է դիմում անհրաժեշտ միջոցների։

**170.** Հրետանու նիւթեղէն մասի վնասւած առարկաների մարտական մասին կից տարւող պահեստի առարկաներով փոխարինելը, ինչպէս նաև դասակի մէջ հրանօթի քարշակը արկղի քարշակով փոխարինելը, կատարւում են դասակապետների կարգադրութեամբ։

**171.** Մարտի ժամանակ եթէ հնարաւոր է նիւթեղէն մասի առարկաների որևէ նորոգութիւն անել, այդ կատարւում է դասակապետների կարգադրութեամբ։ Իսկ եթէ պէտք է դասակների միջև հաւասարեցնել նիւթեղէն մասերը, այդ կատարւում է աւագ սպայի կարգադրութեամբ։

## Հատուած VI.

## Զօրատես եւ զօրահանդէս. Պատիւ տալը.

### ԳԼՈՒԽ I.

### Ընդհանուր ցուցումներ.

1. Մարտկոցը հեծեալ շարքով զօրատեսի և զօրահանդէսի է դուրս գալիս, ունենալով լուծքերի այն թիւը, որ նախատեսուած է ռազմի ու խաղաղ ժամանակի հաստիքի մէջ։

Հետախօսի երկանիւները և գումակները դուրս են գալիս միայն յատուկ պատուէրով։

> Ծանօթութիւն. Այն մարտկոցները, որոնց մէջ ըստ խաղաղ ժամանակի կազմի, դասակներն ունին 1-ական արկղ, զօրահանդէսի հանում են վեցական №№-ներ, ամեն մի հրանօթի համար։

### ԳԼՈՒԽ II.

### Պետին դիմաւորելը.

2. Դիմաւորելու համար մարտկոցը կանգնում է երկայնած շարքով կամ զօրասիւնե-

րով, համարները (№№) նստեցրած իրենց տեղերը, միշտ նեղ միջանցներով, արկղերը հրանոթների ետևից[1])։

3. Մարտկոցը մի որոշ գծով հաստատւում է ուղղացոյցների օգնութեամբ, որի համար դուրս են կանչւում №№ 5-րդը և 6-րդը։ Երբ ուղղացոյցները կանգնեցրած են և հաստատւած, հրանոթներն ու արկղերը նրանց ուղղութեամբ տարւում են մի գծով։ Այս անելիս առաջաւոր լուծքերի հրանոթի ենթասպաները և ետևի լուծքերի առաջի հորիկները, իրենց ձիերի գլուխը հասցնում են մինչև ուղղացոյցների ուսերին բոլորովին մօտ։

4. Մարտկոցի հրամատարը մարտկոցը տեղաւորելուց յետոյ, հրաման է տալիս՝

### 1. ԸՆԴԱՐՁԱԿՕՒ ՊԱՏՐԱՍՏ.

Նա կանգնում է մարտկոցի կենտրոնից 24 քայլ առաջ (իսկ մարտկոցի ճակատը 24 քայլից պակաս է՝ 12 քայլ առաջ)։

Դասակապետները երկայնած շարքում կանգնում են իրենց դասակների կենտրոնում, հրա-

1) Երբ շարքում ամեն մի դասակ 1-ական արկղ ունի, այդ արկղերը կանգնում են իրենց դասակի առաջաւոր հրանոթների ետևը։

նոթի ենթասպաների գծով, իսկ զորամասերում՝ հրանոթի ենթասպաների կազմին կամ իրենց դասակների առաջավոր հրանոթի առաջին համարների կազմին այն կողմից, ինչպես որ հաստատում են:

Փողհարը և հեռախոսող ու կապի խմբի հեծ-ելները, երկուշարք շարքում և ամբողջությամբ մեջ, երկարությամբ կանգնում են մարտկոցի կենտ-րոնի ետևը, առջևի գծից 3 քայլ հետ. հրա-նոթատիրոնի մեջ՝ աջից 3 ակում հողի, մերձին լուծքի ետևը, 3 քայլի վրայ:

Ծանօթութիւն. 1. Եթէ մարտկոցի մօտ կայ փողհարների խումբ, նա կանգնում է այն թևի վրայ, որտեղից պէտք է սպաս-ւում, առաջին համարների դեմ, թևեան գծից 4 քայլ հեռու. 2. Դիմադրելիս փողը չի փչում մարտկոցի փողհարը. 3. Հե-ռախոսի երկաթելիները, եթե զորաշարքի մեջ են, երկուսյան շարքում և պահեստատիպի մեջ կանգնում են կողք-կողքի՝ 3 քայլի վրայ, իսկ հրանոթատիրոնի մեջ իրար ետև, 3 քայլ հեռավորությամբ երկու գծերում են հեռախոսող և կապի խմբի հեծելայինների կենտրոնի ետևում՝ 3 քայլի վրայ:

5. Մարտկոցի հրամանատարը պետք մտնե-

լիս հրաման է տալիս՝

1. ՈՒՂՂԱՑՈՅՑՆԵՐ ՏԵՂԵՐԴ։

Որից յետոյ ուղղացոյցները գնում և նըստում են իրենց տեղերը։

Ծանօթութիւն. Եթէ մարտկոցի համարները և հեծեալները իջեցրած են, նախընթաց հրամանից առաջ մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝

1. ԴԷՊԻ ՀՐԱՆՕԹ, ՁԻԵՐԻ ՄՕՏ.

2. ՀԱՄԱՐՆԵՐ ԵՒ ՁԻԱՎԱՐՆԵՐ ՆԱՏԻՐ։

Առաջին հրամանով համարները և հեծեալները տեղ են բռնում Հրանօթի Վարժութեան կանոնադրքի համաձայն։

Երկրորդ հրամանով համարներն ու ձիավարները նստում են։

Երբ պետը մարտկոցից մօտ 100 քայլի վրայ է, մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝

1. ԶԳԱ՛ՍՏ.

2. ՊԱՐՈՆԱ՛ՅՔ ՍՊԱՆԵՐ ԵՒ ԵՆԹԱ-ՍՊԱՆԵՐ, ԹՐԵՐԸ ՀԱՆ.

3. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ։

*Երկրորդ հրամանով սպաները, հրանոթի ենթասպաները և վերակաց հանում են թրերը։*

*Երրորդ հրամանով դասակապետները ողջունում են, զինվորները գլուխները դարձնում են դէպի պետը, իսկ փողհարների խումբը (եթէ շարքի մէջ է) նուագում է երթերգ կամ քայլերգ։*

Ծանօթութիւն. *Վերակաց և դասակապետները, եթէ նրանք փոխսպայ են, ողջունում են ինչպէս սպաները։*

*Մարտկոցի հրամանատարը վերջին հրամանի հետ միաժամանակ թուրը* սայրն ի վեր *բռնած՝ ձին սիգաճայր քշում մօտենում է պետին։ Նրանից 6 քայլ հեռաւորութեան՝ իջեցնում է թուրը և մեծարելով աստիճանը (օր. պ. գնդապետ), զեկուցանում է՝ զօրաշարքում ներկայ է այսինչ բրիգադի (այսինչ դամնեակի) այսինչ մարտկոցը և յանձնում է շարքի ցուցագիրը։*

Ծանօթութիւն. *Շարքի ցուցագիրը պէտք բռնել ձախ ձեռքում երասանակների հետ, իսկ մատուցել աջ ձեռքով, թուրը տալով ձախ ձեռքը։*

*6. Մարտկոցը շրջելու ժամանակ, մարտ-*

կացի հրամատարը պետին ողջունում է հետեւ-յալ նրան դրսի կողմից, թուրը ցած թողած. մարտակցի բոլոր պաշտօնատարները եւ զինուոր-ները պետին ողջունում են այսպէս. նրա ձախա-կի աչքից գնալու հետ գլուխները դէպի նա դարձնելով։

7. Պետից զօրամասի վերաբերեալ ցու-ցումն ստանալով, մարտակցի հրամատարը գնում է մարտակցի կենտրոնի առջեւ եւ հրամանում է այսպէս՝

1. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ.

2. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ ԵՒ ԵՆԹԱ-ՍՊԱՆԵՐ, ԹՈՒՐՆ Ի ՊԱՏԵԱՆ։

Առաջին հրամանով ողջունողները թրերն առնում են ուսերին եւ մարտակցի բոլոր պաշ-տօնատարները գլուխները բռնում են ուղիղ։

Երկրորդ հրամանով բոլորը, բացի մարտա-կցի հրամատարից, թրերը պատեան են դնում։

8. Եթէ մարտակցի շէֆը զօրամասին ներ-կայ է, նա կանգնում է հրամատարից 2 քայլ առաջ եւ կատարում է 5-րդ եւ 6-րդ յօդուածների ցուցումները։

Այդ դէպքում ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ հրա-մանը տալով, մարտակցի հրամատարը ձին սի-

պատյար քշելով գնում է դեպի մարտկոցի այն թևը, որտեղից պետը գալիս է, և կանգնում է հրանոթի ենթապատների գծի վրա, թևերից (կամ փաղանգների խմբից) 2 քայլ հեռու։

Մարտկոցը շրջելու ժամանակ, մարտկոցի հրամանատարը պետին ուղեկցում է շեֆի հետ միասին։

9. Ավագ պետին դիմավորելիս, մարտկոցի բոլոր պետերը՝ որոնց իշխանության տակ է մարտկոցը, ըստ ավագության կանգնում են հաստարման թևում, հրանոթի ենթապատների գծի վրա, այնպես, որ չծածկեն փաղանգների խմբի առաջը։

Այս անձերը պատվի տալու համար ձեռքը գնում են գլխարկին։

10. Եթե մարտկոցի հրամանատարը մարտկոցին մոտենում է հրապարակում, ավագ սպան, եթե համարները ու հեծյալները առաջուց դասավորված չեն, նստեցնում է նրանց և հրաման տալիս՝

1. ԶԳԱՍՏ. ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԱՋ (ձախ).
2. ՊԱՐՈՆԱՅՔ ՍԳԱՆԻՐ.

11. Արշավի դիմավորելու համար արած

կազմափոխութիւնից յետոյ մարտկոցի բոլոր պաշտօնատարները, Մարտկոցի Վարժութեան Կանոնագրքի համեմատ, բռնեն իրենց տեղերը, մարտկոցի հրամատարը հրաման է տալիս՝

ՏԵՂԵՐԴ։

## ԳԼՈՒԽ III.

### Հանդիսաւոր զօրանց.

12. Հանդիսաւոր զօրանցի համար մարտկոցի հրամատարը մարտկոցը կազմափոխում է, զօրանցն ընդունող պետի ցուցումի համեմատ և դուրս բերում նրան հանդիսաւոր զօրանցի գծի վրայ։

13. Մարտկոցը հանդիսաւոր զօրանց կարող է կատարել երկայնած շարքով կամ սիւներով միշտ նեղ միջանցներով, քայլով կամ երկատարոփ, ինչպէս կ՚պատուիրի պետը։

14. Մարտկոցի հրամանատարը հանդիսաւոր զօրանցի համար, կանգնում է կենտրոնի առջևը 24-քայլի վրայ (եթէ, մարտկոցը 24 քայլից պակաս ճակատ ունի, 12 քայլի վրայ)։

Դասակապետները երկայնած շարքում կանգ-

նում են իրենց դասակների կենտրոնի դիմաց. հրանոթի ենթասպաների գծից 4 քայլ առաջ, օժանդակության մէջ, իրենց դասակների առաջաւոր հրանոթի ենթասպաներից 4 քայլ առաջ, հրանոթայության մէջ, հրանոթի ենթասպաների, կամ առաջին հորիկների կողքին՝ հաւասարման կողմի վրայ։

Փողհարը և հետախույզ ու կապի խմբի հեծեալները, երկայնած շարքում և օժանդակության մէջ, կանգնում են երկտողյան մարտակարգի կենդրոնի յետևը, արկղերի գծից 3 քայլ հեռու, հրանոթայության մէջ՝ աջից երեք-երեք հոգի, վերջին լուծքից երեք քայլ հեռու։

Վերակացն կանգնում է մարտակարգի կենտրոնի ետևը, 6 քայլ հեռու։

Ծանօթութիւն. Եթէ հեռախօսի երկանիւները շարքի մէջ են, երկայնած շարքի և օժանդակության մէջ կանգնում են կողք-կողքի, 3 քայլ միջանցով, իսկ հրանոթայության մէջ իրար ետև 3 քայլ հեռավորությամբ. երկու դէպքում էլ հետախույզ և կապի խմբի հեծեալների կենդրոնի ետևը 3 քայլի վրայ։

15. Երբ մարտկոցը հանդիսաւոր զօրանցի գծին է հասնում, մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝

1. ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԶՕՐԱՆՑԻ.
2. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ: ԹՐԵՐԸ ՀԱՆ.
3. ՀԱՒԱՍԱՐՈՒՄՆ ԱՋ, (ըէր).
4. ՄԱՐՇ.

Ծանօթութիւն. Վերակացն և դասակարգեր-ները, եթէ նրանք փոխ սպաներ են, թրերը հանում են սպաների հետ միաժամանակ:

Վերջին հրամանով մարտկոցը սկսում է շարժուել. Թեթեւ հրանօթի ենթասպան անցնում է ուղղացոյցների գծից 2 քայլ ձախ.

Եթէ ուղղացոյցներ չեն դրուած, ենթասպայի պարտականութիւնն է կանոնաւոր ուղղութիւնը պահպանել:

16. Գծին չհասած, մօտ 20 քայլի վրայ մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝ ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ. Թուրը բռնում է, [illegible] ութ քայլի վրայ իջեցնում է վայր. Այս հրամանով մարտկոցի բոլոր սպաները բռնում են թրերը [illegible] և մարտկոցի հրամա-

տարի հետ միաժամանակ իջեցնում են: Միաժամանակ մարակոցի պաշտօնատարները և զինւորները գլուխները դէպի պետն են դարձնում:

Ծանօթութիւն. Վերակացն և դասակապետները, եթէ նրանք փոխ-սպաներ են, ողջունում են ինչպէս սպաները:

17. Պետի առաջից 4 քայլ անցնելով, մարակոցի հրամանատարը նորից թուրը առջին ի վեր է բռնում և սրգապար քշելով ձին շուռ է տալիս դէպի պետը և կանգնում նրա աջակողմը 4 քայլ հեռու, երեսը դէպի նա դարձրած և հաւասարելով նրա ձիու գլխին՝ վար է իջեցնում թուրն ու մնում այնպէս, մինչև ամբողջ մարակոցն անցնում է պետի առջևից:

18. Եթէ շէֆը մարախոսուհին է, նա գնում է մարակոցի հրամանատարից 2 քայլ առաջ և կատարում 16-րդ և 17-րդ յօդուածների ցուցումները:

Շէֆից յետոյ դէպի պետը շուռ է գալիս նաև մարակոցի հրամանատարը և կանգնում նրա աջակողմին, ձիու գլուխը հաւասարեցնելով նրա ոջ տապանդակին:

19. Մարտկոցի բոլոր սպաները գնում են մարտկոցի աջ թևում. աւագը՝ հրանօթի են- թասպաններից աջ (ուղղացոյցների գծից դուրս), միւսներն ըստ աւագութեան իրար ետեից, մի- մեանցից 1-ական քայլ հեռու։

Սրանք պատիւ տալու համար ձեռքը գըլ- խարկին են դնում և զօրանցն ընդունող սպայի առջևից անցնելուց յետոյ՝ մտնում են շարքերի մէջ։

## ԳԼՈՒԽ IV.

### Մարտկոցի պատիւ տալը.

20. Մարտկոցը պատիւ է տալիս Հանրա- պետութեան Նախագահին, օտար պետութիւն- ների գլուխներին, դրօշներին, զօրավարներին, ծովակալներին, ուղղակի պետերին, շէֆին, զօ- րամասերին, քրիստոնէական հոգևոր թափոր- ներին և այն յուղարկաւորութիւններին, որոնց մասնակցում է զօրքը [1])։

1) Փողհարները դադարեցնում են փչելը առհա- սարակ ամեն մի հոգևոր թափորի կամ յուղարկաւո- րութեան մօտից անցնելիս։

Բացի այդ, մարտիկը, երբ նրա հրամանատուն ստորակայ սպայ է, պատիւ է տալիս բոլոր բարձրակայ աստիճաններին, իսկ երբ հրամանատուն զինւոր է և փոխ-սպայ՝ պատիւ է տալիս նաև բոլոր ստորակայ աստիճաններին։

Ծանօթութիւն. Աւագի ներկայութեամբ նրանից կրտսերին պատիւ տալու հրաման չի տրւում։

21. Կանգնած տեղում պատիւ տրւում է՝

ա. Հանրապետութեան Նախագահին, օտար պետութիւնների գլուխներին, ուղղակի պետերին, դրօշներին և հոգեւոր թափօրներին, մարտկոցի հրամանատարի հետևեալ հրամանով.

1. ԴԷՊԻ ՀՐԱՆՕԹ, ՁԻԵՐԻ ՄՕՏ.
2. ՀԱՄԱՐՆԵՐ ԵՒ ՁԻԱՎԱՐՆԵՐ, ՆՇԱՏԻՐ.
3. ՁԳԱՍՏ, ՀԱՒԱՍԱՐՈՒՄՆ ԱՋ (ձախ).
4. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ.

Եթէ համարները և ձիավարները նախապէս նստած են, 1-ին և 2-րդ հրամանները չեն տրւում։

բ. Անցած անձանց և շարքային զօրամասերին պատիւ տալու համար, եթէ համարները

և հեծեալներն իջեցրած էին, էլ չէին հեծնում. այս դէպքում մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝

1. ԴԷՊԻ ՀՐԱՆՈԹ, ՁԻԵՐԻ ՄՈՏ.
2. ԶԳԱՍՏ, ՀԱՒԱՍԱՐՈՒՄԸ, ԱՋ (ձախ).
3. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ:

Այս ձեւով պատիւ է տրւում նաև մարտկոցի բոլոր ուղղակի պետերին այն դէպքում, երբ մարտկոցը շարւած է զօրատեղի կամ զօրահանդէսի համար և այդ պետերը զօրատեղու միջից կամ զօրահանդէսի բանակից առաջ են մօտենում մարտկոցին:

Բոլոր դէպքերում վերջին հրամանով սպաները ձեռքերը գլխարկին են դնում և մարտկոցի բոլոր պաշտօնատարներն ու զինւորներն իրենց գլուխները դարձնում են դէպի պետը:

> Ծանօթութիւն. Վերակացն և գասակապետեները. եթէ սրանք փոխ սպաներ են. պատիւ են տալիս ինչպէս սպաները:

22. Շարժման ժամանակ պատիւ տալու համար, մարտկոցի հրամանատարը հրաման է տալիս՝

1. ԶԳԱՍՏ, ՀԱՒԱՍԱՐՈՒՄՆ ԱՋ (ձախ).
2. ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ:

Երկրորդ հրամանով սպաները ձեռքերը գլխարկին են դնում և բոլոր պաշտօնատարներն ու զինուորները գլուխները դարձնում են դէպի պետը կամ աւագը:

Ծանօթութիւն. Վերակաւն և դասակապետները, եթէ նրանք փոխ սպաներ են պատիւ են տալիս ինչպէս սպաներ:

Եթէ պետը կամ աւագը տեղից գալիս հասնում է մարտկոցին, այն ժամանակ, տեղից գնացող վերակաւն, ենթասպան կամ սպան այդ մասին նախազգուշացնում է՝ տալով ԶԳԱՍՏ հրամանը: Այս հրամանը հաղորդւում է դէպի առաջ:

23. Երբ զօրամասերն իրար են հանդիպում՝ պատիւ տալու հրամանն առաջ տալիս է փոքր զօրամասի պետը, իսկ եթէ նրանք հաւասար են, հրամանները տրւում են միաժամանակ:

24. Պատիւ տալը վերջանում է մարտկոցի հրամատարի երկրորդ անգամ տրւած ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ հրամանով:

25. Մարտկոցը բնաւ պատիւ չի տալիս

ռազմավարական մարզանքների, ռազմափորձերի, հրաձգութեան և երթի միջոցին հանգիստ առնելու ժամանակ։

Եթէ յիշւած դէպքերում պետը բարևում է, զինուորները պատասխանում են իրենց ունեցած դիրքը չփոխելով։

26. Երբ պետը մօտենում է մարտկոցին պատիւ տւող մարտկոցի հրամատարը դիմաւորում է նրան, զեկուցում է, թէ որ բրիգադի (բաժնեակի) որ մարտկոցն է, ինչ է անում, և մնում է նրա մօտ մինչև պետի հեռանալը կամ նրանից պատւէր ստանալը։

Նոյնն անում է և շարժւող մարտկոցի հրամատարը, եթէ պետը կանգ է առնում, որ մարտկոցն իր մօտով անցնի։

Այս յօդւածի պահանջը կատարւում է նոյնպէս բոլոր վարժութիւնների և պարապմունքների, հրաձգութեան, ռազմափորձերի, երթի և հանգստի ժամանակ և չի վերաբերում միայն ննջեցեալին ուղեկցող մարտկոցին։

27. Յուղարկաւորութեան համար նշանակած մարտկոցը պատիւ տալիս է միայն ննջեցեալին, երբ դագաղը դուրս է բերում. իսկ

երբ պետերը մօտենում են՝ պիտի հրաման տալ՝
ԶԳԱ՛ՍՏ, ՀԱՒՍԱՐՈՒՄՆ ԱՋ (ձախ),
ՊԱՐՈՆԱՅՔ ՍՊԱՆԵՐ։

Ցուղարկաւորութեան միջոցին մարտկոցը ոչ ոքի պատիւ չի տալիս

# ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

## ՅԱՒԵԼՈՒԱԾ I.

### Պայմանական նշաններ շարժման կարգի համար.

1. Նախապատրաստական (ուշադրութիւն)— նշանի համար պէտք է, պարզած ձեռքով թուրը ուղղաձիգ բարձրացնել, ծայրը դէպի վեր բռնած։

2. Ցառաց (աջ-ձախ)—հորիզոնական կերպով պարզած ձեռքով թուրը դարձնել շարժման կողմը (անկախ մարտկոցի հրամանատարի ձիու դիրքից)։

3. Շուռ գալ ձախ—գլխավերեւում թրով հորիզոնական շրջաններ գծել։

4. Շուռ գալ աջ—ձիու աջ կողքին թրով ուղղահայեաց շրջաններ գծել։

5. Դարձ դէպի աջ (ձախ)—թուրը բռնած ձեռքը հորիզոնական կերպով պարզել շրջող թեւի համապատասխան ուսի շարունակութեամբ,

յետոյ արագ շարժումով ձեռքը դարձնել դէպի միւս ուսը (180°)՝ ցոյց տալով շարժման նոր ուղղութիւնը։

6. Շրջումն թևի վրայ (շրջումն ձիով) — Թուրը բռնած ձեռքը հորիզոնական կերպով պարզել շրջուող թևի ուղղութեամբ, ապա սահուն կերպով դարձնել դէպի ցանկացած ուղղութեան կողմը։

7. Ճակատի երկայնումը (շարուիր) — Թուրն ուղղաձիգ, ծայրը դէպի վեր բարձրացնել և ամբողջ ձեռքով մի քանի անգամ աջ ու ձախ ճօճել։

8. Լայն միջանցներ — Թրով մի քանի անգամ հորիզոնական խիթեր անել աջ և ձախ կողմը։

9. Նեղ միջանցներ — Ձիու աջ և ձախ կողմից փոխէփոխ մի քանի անգամ ցոյց տալ զինւորի պատւի առ ձեռ։

10. Կանգ — Թուրը բռնել ուղիղ ի վեր և մի քանի անգամ սահուն կերպով աջ և ձախ թեքել, դաստակը ծայրով։

11. Երկարում — Թուրը բարձրացնել աջ ուսի վրայ, ծայրը դէպի վեր և մի քանի ան-

*կամ առաջ և յետ թեքել։*

12. Սիզապար—*թուրը դէպի մի կողմը պարզած աջ ձեռքին բռնած պահել ուղղաձիգ, ծայրը դէպի վեր։*

13. Կանգ-ա՛ռ—*թուրը դէպի աջ կողմ պարզած, աջ ձեռքին բռնած պահել, ծայրը դէ-պի ցած։*

14. Կատարողական *նշանի համար պէտք է—թուրը պարզած աջ ձեռքով բարձրացնել, ծայրը դէպի վեր, և գլխավերևում պտտցնելով մի շրջան անել ու ցած իջեցնել։*

15. Դետի ուղղությամբ (այետի ետեւից) գայք—*թուրը բռնել սայրն ի վեր։*

16. Հրանօթասիւն կազմելը—*թուրը հորի-զոնական կերպով բռնել գլխի վերևում, իր նրա-տած ձիուն խառորնակի։*

17. Օժանդասիւն կազմելը—*աջ ուսի վե-րևում, ծայրը դէպի վեր բարձրացրած, թրով մի քանի անգամ խիթեր անել դէպի վեր։*

18. Հրանօրներ—*թուրը իր կռնակի կող-մով դնել աջ ուսին։*

19. Առկղեր—*թուրը իր կռնակի կողմով դնել ձախ ուսին։*

20. Լուծքերի տեղափոխութիւն—*նախապէս տալով 18-րդ կամ 19-րդ ազդանշանը, հորիզոնական պարզած թրով մի քանի խիթեր անել դէպի տեղափոխութեան կողմը։*

21. Քարշակից—*նոյն № 13-րդ նշանը մի քանի անգամ ցոյց տալ աջ ու ձախ կողմերից, թուրը պարզած ձեռքով գլխավերևից տանելով մի կողմից դէպի միւսը, ծայրը վեր բռնած։*

*Թրի վերջին դրութիւնը պիտի լինի ձախ կողմում, ծայրը դէպի ցած։*

22. Քարշակը յառաջ *(*քարշակը յետ*)*—*շարժման նշանը պիտի տալ դէպի համապատասխան կողմը (№ 2)։*

23. Քարշակները դէպի մարտկոց—*տալ № 11 կամ №№ 10 կամ 12 նշանները։*

24. Իջիր—*հանել գլխարկը և արագօրէն իջեցնել դէպի աջ ասպանդակը։*

25. Պետերի հաւաքը—*գլխարկը պտտեցնել գլխավերևում։*

Ծանօթութիւն 1. № 14 նշանը տրւում է բոլոր նշաններից յետոյ, բացի № 12-ից և արագ քէլերից դէպի դանդաղ քէլքն անցնելու նշանները։

Ծանօթութիւն 2. Աւելի բարդ շարժումների և շարւածքների համար նկարագրած նշանները միացւում են։

Յաւելուած 11.

## ՇԱՐՔԻ ՑՈՒՑԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ

*Շարքի մէջ ներկայ են*

1920 թ. Փետրուար 12.

| Զօրամասերի անունը. | Մարտկոցների թիւը | Բարձրակայ սպաներ. | Ստորակայ սպաներ. | Ենթասպաներ. | Փողհարներ. | Ռոսկականներ. | Սպաշարներ. | Զինուորներ ընդամենը. | Ձիեր. Ճարային. | Ձիեր. Հրետային. | Ձիեր. Գումակային. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այսինչ հրետային բրիգադի կամ բաժնեակի այսինչ մարտկոցը. | 2 | 2 | 8 | 12 | 2 | 260 | 44 | 318 | 28 | 144 | 62 |

Արագաձիգ հրանօթներ . . . 8.
Ռումբարկղեր . . . . . 16.
Գումակ { Հրետային . . . . . 00.
Գումակ { Համբարակային . . . . . 00.

Մարտկոցի հրամանատար

Գնդապետ X.

Ծանօթութիւն. *Ենթասպաների թւի մէջ մտնում են այն թիլանինները, որոնք շարքի մէջ ենթասպայի պարտականութիւններ են կատարում.*

*Շարքի այս ցուցագիրը պիտի գրած լինի. մի անգամ ծալած կէս թերթի վրայ և երկծալ դիրքով պիտի ներկայացնել միայն մի ուսագ պետի։*

*Նոյնպիսի ցուցագրի մի օրինակ զօրատեսի նախընթաց օրն ուղարկւում է բրիգադի վարչութեանը, միայն մակագրած* Շարքում պիտի լինեն.

Ծանօթութիւն. *Եթէ մի քանի մարտկոցների համար մի ընդհանուր շարքի ցուցագիր է պատրաստւում, այն ժամանակ, նրա ետևի երեսին պէտք է գրել բաժնեակների և մարտկոցների հրամանատարների աստիճաններն ու ազգանունները, առաջին բաժնեակից (մարտկոցից) սկսած.*

# ՅԱՒԵԼՈՒԱԾ III.

## ՑՈՒՑԱԿ

Թեթեւ հրետազօրի մէջ գործ ածուող ազդանշանների.

№ 1. Առաջին երկրորդ և այլն մասերը կանչելու համար [1].

№ 2. Քայլով.

№ 3. Երկատարոփ.

№ 4. Սիգապար.

№ 5. Դէպի աջ.

№ 6. Դէպի ձախ.

№ 7. Դէպի յետ [2].

№ 8. Հրանօթային կազմելը.

№ 9. Օժանդակային կազմելը.

№ 10. Երկայնած սիւն կազմելը (շարուիր).

№ 11. Կատարողական ազդանշան [3].

№ 12. Կանգ առ.

№ 13. Լսիր.

№ 14. Մարտկոցը դէպի դիրք կանչելը.

№ 15. Կրակ բանալը.

№ 16. Կրակը դադարեցնելը.

№ 17. Ընդհանուր ուտոր.

№ 18. Իջիր.

№ 19. Նստիր.

№ 20. Պետերի հուտքը.

№ 21. Ընդհանուր հուտք.

№ 22. Տագնապ.

№ 23. Երթ [1]).

№ 24. Ազդարարութիւն այգանուացի ու ցայ-
գանուացի և հաւաքի.

№ 25. Այգանուագ ու ցայգանուագ.

№ 26. Աղօթքի համար.

№ 27. Աւարտ աղօթքից յետոյ.

№ 28. Թաղման քայլերգ.

№ 29. Պահակափոխի քայլերգ (բոտ պահակների).

№ 30. Ընդհանուր—քայլերգ.

1). Այս ազդանշանը մարտակոցներին է մե-
րաքերում՝ եթէ տրւում է բաժնեակի հրամա-
տարի կողմից, բաժնեակներին՝ եթէ տրւում է
բրիգադի հրամատարի կողմից և այլն։

2). Այս ազդանշանով պէտք է օռ ռ գայլ
ձախ դարձը կատարել։ Եթէ ցանկալի է, որ
զօրամասը օուռ գայլ աջ ձեւով դարձը կատարի,
այն ժամանակ № 7 ազդանշանից յետոյ պէտք

է նստել № 5 ազդանշանի (դէպի աջ) կէսը։

3). №№ 2 – 10 ազդանշանների հետ տըր-ւում է կատարողական ազդանշան (№ 11)։

4). Պարտադիր է միայն բանակի փողհար-ների համար։

---

# ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

| | |
|---|---|
| Ազդանշան | сигнализація |
| Այգանուագ | заря (утрен). |
| Ցայգանուագ | заря (вечерн.) |
| Անդրադարձիկ | отражатель |
| Անձնական կազմ | личный составъ |
| Անյապաղ | немедленно |
| Ապաշար (զինուոր) | нестроевой (солдатъ) |
| Առաջաւոր | головной |
| Առաջաւոր լուծք | головная запряжка |
| Առաջնորդ | вожатый |
| Ասպանդակ(ներ) | стремя(мена) |
| Արկղավար | ящичный вожатый |
| Արկղաւոր | ящичный номеръ |
| Արձակիւն | выстрѣлъ |
| Աւագ | старшій |
| Աւագ սպայ | старшій офицеръ |
| Աւարտ | отбой |
| Բաժնեակ | дивизіонъ |
| Բացուածք, բանալը (միջանցքի) | размыканіе (интерваловъ) |
| Բնոյթ | характеръ |

| | |
|---|---|
| Տեղանքի բնույթ | характеръ мѣстности |
| Գնդիք | снарядъ |
| Գումակ | обозъ |
| Գումակի | обозный |
| Դասակ | взводъ |
| Դասակապետ, դասակի պետ | командиръ взвода |
| Դասակներով ջոկ-ջոկ դասակ-առ դասակ | по взводно |
| Դար ու փոս (տեղ) | пересѣченная мѣстность |
| Դարձ, դարձում | поворотъ |
| Դիտակէտ | наблюдательный пунктъ |
| Դիտանոց | вышка |
| Դիտող | наблюдатель |
| Դիրք | позиція |
| Դիրքի տեղամաս | участокъ позиціи |
| Դրօշ | знамя |
| Ելակէտ(եր) | исходный пунктъ (исходныя данныя) |
| Ելք | выѣздъ |
| Ենթասպայ | унтер офицеръ (въ пѣх.) фейерверкеръ (въ артил.) |
| Ետք | задокъ, задный ходъ |

| | |
|---|---|
| Երթերգ | походъ (маршъ) |
| Երկայնել | развернуть |
| Երկայնած շարք | развернутый строй |
| Երկանիւ | двуколка |
| Զարկ, կարտէչ | ударъ, картечь |
| Զուգահեռաշարք | параллельный вѣеръ |
| Զուգահեռութեան աս-տիճանը | ступень параллельности |
| Զօրատես | смотръ |
| Զօրահանդէս | парадъ |
| Ընդունելու պատրաստ | для встрѣчи |
| Թելանի(ներ) | бомбардиръ, ефрейторъ |
| Թև | флангъ, плечо |
| Թևեան կամ թևի հրա-նօթ | фланговое орудіе |
| Թաքստոց | закрытіе |
| Թաքունութիւն | Скрытность |
| Լայն, լրիւ | полный (интервалъ) |
| Լուծք(եր) | запряжка(и) |
| Խիթ(եր) | уколъ(ы) |
| Խոչընդոտ | препятствіе |
| Խոտորնակ | поперекъ |
| Խոտորնակի | поперечный |

| | |
|---|---|
| Խրամատ(ներ) | окопъ(ы) |
| Խումբ | команда |
| Հետախուզութեան և կապի<br>խումբ | команда развѣдки и связи |
| Ծածուկ | закрытый |
| Ծովակալ | адмиралъ |
| Կազմ | расчетъ, составъ |
| Կազմափոխութիւն | перестроеніе |
| Կայան | остановка, станція |
| Կապ | связь |
| Կապի խումբ | команда связи |
| Կատարողական | исполнительный |
| Կարգ | порядокъ |
| Շարժման կարգ | порядокъ для движенія |
| Մարտակարգ | порядокъ для боя |
| Կաց | стой |
| Կողմորոշ | оріентиръ |
| Կողմորոշ կէտեր | оріентирные пункты |
| Կորուստ, շարքից դուրս<br>գալը | убыль |
| Կռնակ (թրի) | обухъ (шашки) |
| Կռներ | цапфы |
| Կարօն | галонъ |

Կրակ — огонь
Խմբակային կրակ — группы выстрѣловъ
Հատ-հատ կրակ — одиночные выстрѣлы
Ճատաղ կրակ — бѣглый огонь
Կրանք — паркъ
Կրտսեր — младшій
Կրտսեր սպայ — младшій офицеръ
Հաղորդիչ(ներ) — передатчикъ(ки)
Համալիր — комплектъ
Համար — номеръ (№)
Համբարակապետ — главный интендантъ
Համբարակային — интендантскій
Հանգիստ — отдыхъ
Հանգիստաւոր զօրանց — церемоніальный маршъ
Հաստիք — штатъ
Հատուած — отдѣлъ
Հաւաք — сборъ
Հաւաքատեղ — сборный пунктъ
Հաւասար — равняйсь, равненіе
Հաւասարման կողմ — сторона равненія
Հերթ — очередь
Հեծեալ արկղավար — конный ящичный вожатый
Հեռաւորութիւն — дистанція

| | |
|---|---|
| Հեռակայութեան փողակ | дистанціонная трубка |
| Հեռացումն | отъѣзка |
| Հեռախօսակ | телефонистъ |
| Հեռախօս | телефонъ |
| Հեռախօսային երկանիւ | телефонная двуколка |
| Հետախուզել | произвести развѣдку |
| Հետախուզութիւն | развѣдка |
| Հետախոյզ խումբ | команда развѣдчиковъ |
| Հետախոյզ | развѣдчикъ |
| Հորիկ | передній уносъ |
| Հոգեւոր թափոր | духовная процессія |
| Հրահանգել | указать, дать инструкцію |
| Հրաձգութիւն | стрѣльба |
| Հրաման | приказъ, команда |
| Հրամատար կամ հրա-մանատար | командиръ |
| ըստ կարգի հրամա-տարութեան | по командѣ |
| Հրամանատու | командующій |
| Հրանօթ | орудіе |
| Հրանօթասիւն | орудійная колонна |
| Հրանօթ-հրանօթ | орудіями |
| Հրանօթ առ հրանօթ | по орудійно |
| Հրետազօր } Հրետանի } | артиллерія |

| | |
|---|---|
| Հրետային | артиллерійская(ія) |
| Ղեկավարութիւն | управленіе, веденіе |
| Ճակատ | фронтъ, лобъ |
| Ճակատի գիծ | линія фронта |
| Ճակատի մաս (տուտա-մի) | лобовая часть (хобота) |
| Ճանկ | вилка |
| Ճօճել | размахивать |
| Մատոյց(ներ) | доступъ(ы), подступъ(ы). |
| Մարզանք | ученіе, упражненіе. |
| Ռազմավարական մար-զանքներ | тактическія ученія |
| Մարտի, մարտական | боевой(ая) |
| Մարտի մաս | боевая часть |
| Մարտկոց | батарея |
| Մարտկոցի վարժութիւն | батарейное ученье |
| Մերձեցում | подъѣздъ |
| Միջանց(ներ) | интерваль(ы) |
| Յարմարանք(ներ) | приспособленіе(нія) |
| Նախապատրաստական | предварительный |
| Նեղ | сомкнутый (интерваль) тѣсный |
| Ներառեալ | включительно |

| | |
|---|---|
| Նիշ(եր) | отмѣтка(ки) |
| Նիւթեղէն մաս | матеріальная часть |
| Նշադրել | отмѣтить |
| Նշադրուել | отмѣтиться |
| Նշադրուել այս ինչ առարկայի վերաբերմամբ | отмѣтиться по такому-то предмету |
| Նշադրուել իրար վերաբերմամբ | взаимно отмѣтиться |
| Նշանաձող | вѣха |
| Նշանարար | сигналистъ |
| Նշանարար հեռախօսակ | сигналистъ-телефонистъ |
| Նշանառութիւն | прицѣливаніе |
| Բաժնակինշանառութիւն | раздѣльное прицѣливаніе |
| Անբաժաննշանառութիւն | нераздѣльное прицѣливаніе |
| Շարան | эшелонъ |
| Կրանքի շարան | парковый эшелонъ |
| Շարք | строй |
| Հեծեալ շարք | конный строй |
| Շարային զօրամաս | строевая часть |
| Շարքից դուրս գալը | убыль |
| Շարքի ցուցագիր | строевая записка |
| Շարուածք | построеніе |

| | |
|---|---|
| Շրջում | заѣздъ |
| Շրջւող թև | заѣзжающій флангъ |
| Շրջող թև | заходящее плечо, флангъ |
| Շրջւող հրանօթ | заходящее орудіе |
| Շքախումբ | свита |
| Ողջոյն | салютъ |
| Ողջունել | салютовать |
| Ուղղակի պետ | прямой начальникъ |
| Ուղղահայեաց | перпендикуляръ (но) |
| Ուղղացոյց | линейный |
| Ուղղութիւն | направленіе |
| Ուրւագծել | заносить |
| Ուրւագծել տեղագծական քարտի վրայ | заносить на кроки |
| Պահակափոխութիւն | смѣна карауловъ |
| Պաշտպանակ | прикрытіе |
| Պատեան | ножна (шашки) муфта (орудія) |
| Պատւէր | приказаніе |
| Պատրհան | нишь |
| Պատսպարան, պատսպարում | укрытіе |
| Պարկուճ | гильза |

| | |
|---|---|
| Պետ | начальникъ |
| Բարձրագոյն պետ | высшій начальникъ |
| Մերձաւոր պետ | ближайшій начальникъ |
| Գործիք(ներ) | приборъ(ы) |
| Ջոկ | отрядъ |
| Ջոկապետ | начальникъ отряда |
| Ռազմափորձ(եր) | маневръ(ы) |
| Ռմբաձիգ | бомбардиръ |
| Ռմբակոծել | обстрѣлять |
| Ռմբակոծում | обстрѣлъ |
| Ռումբարկղ | зарядный ящикъ |
| Սանդղակ | шкала |
| Սայրն ի վեր | подвысь |
| Թուրը բռնել սայրն ի վեր | шашку взять подвысь |
| Սարքաւորում | оборудованіе |
| Սիւն(եր) | колонна(ны) |
| Հրանօթասիւն | орудійная колонна |
| Օժանդակասիւն | резервная колонна |
| Սոսկական (զինուոր) | рядовой |
| Սպայ | офицеръ |
| Ստորակայ սպայ | оберъ офицеръ |
| Բարձրակայ սպայ | штабъ офицеръ |
| Սուրհանդակ | ординарецъ |

Վանդակ(ներ) лотокъ, лотки
Վերակայ фельдфебель
Տագնապ тревога
Տեղագրութիւն мѣстность, районъ
Տեղանք мѣстность
Տեսածիր кругозоръ
Տեսողական оптическій
Տողան шеренга
Տուտ (պոչ) хвостъ
Փակում, փակել, (միջանցի) смыканіе (интервала)
Փոխ-սպայ подпрапорщикъ
Փողհար трубачъ
Քայլ шагъ
Քայլ, քայլերգ маршъ
Քարշակ передокъ
Քէլք(եր) аллюръ(ы)
Քողարկ маска
Քողարկել маскировать
Քողարկում маскировка
Օժանդակ резервъ
Օժանդակային резервный
Օժանդասիւն резервная колонна

Гос. Публ. Библиотека 2022 — С.С.Р.А.

-100-

ՀՀ Ազգային գրադարան
NL0835657

Ա92
92

# ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) ՀՐԱՑԱՆԻ ԵՒ ՓԱՄՓՈՒՇՏԻ ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

2) ՀԵՏԵՒԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԴԻՐՔ.

3) ԼԵՌՆԱՅԻՆ ՀՐԵՏԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ. ՀՐԱՆՕԹԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

4) ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ.

5) ՀՐԱՀԱՆԳ ՀԵՏԵՒԱԶՕՐԻ ԽՐԱՄԱՏՆԵՐ ՇԻՆԵԼՈՒ.

6) ԹԵԹԵՒ ՀՐԵՏԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ. ՀՐԱՆՕԹԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

7) ԿԱՐԴԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

8) ԹԵԹԵՒ ՀՐԵՏԱԶՕՐԻ ՇԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՄԱՐՏԿՈՑԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

*Բոլոր կանոնագրքերն ունեն հայ—ռուսերէն բառացուցակ։*